





ՀՅԴ Պատկերասրբ



ԴՐՕՇԱԿ



Օգոստոս N8 (1611)

2009





“Դրօշակ”

ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ Կ. Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեռավորումը՝ Մ. Հովսեփյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երեւան, 375010, Միեր Սկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepien**

12| 1 Mher Mkrтчian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Խմբագրական

«Վէմ» համահայկական հանդեսը 2

Սոցիալ-սնտեսական

«Ազատ ռուկայի» ձգնաժամը և հակակոչոն մոդելները 4

Հայ դաս

Սևրի դայանազրի վերլուծություն 12

Տեսական

Սոցիալական յեղափոխություն 25

Տեսակետ

Շամանակակից Հայոց դասնությունն ու

յաղթանակի տեսության անհրաժեշտությունը 36

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ


Թիրքիա: Արսազաղթը 45

Նոր գրքեր

Պեժ Է փրկել հայերին 46

Պատկերասրահ

Էմիլ Գազազ 48



«ՎԷՄ»

համահայկական հանդեսը

ՀՅԴ գաղափարական մամուլի ընթացիկ համար բացառիկ իրադարձություն է «Վեմ» հանդեսի վերահրատարակումը:

Ժամանակին «Վեմի» գիտականության ամենահասարակ երաժիշիքը սալիս էր Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացեանը, որի խմբագրած հանդեսը շատ կարճ ժամանակամիջոցում դարձավ հայագիտության ճշմարիտ փարոս, հայոց ժամանակակից դաստիարակության անաչառ մեկնումի շեմարան:

Առաջին իսկ համարում հրատարակած յոթուածներով վերահրատարակուող «Վեմը» ցուցաբերում է իր հասարակությանը վրացեանական «Վեմի» գիտական մակերեսում էր եւ դարձում հայագիտութեանը նուիրուելու բացորոհեռանկար: «Ճշմարտութեան ու արդարութեան անխզելի միասնութեան աշխարհայեացքային մեկնակէտից,- գրում է «Վեմի» խմբագիր, դասական գիտութիւնների դոկտոր Գևորգ Խոտիկեանը,- մեր ինքնաճանաչողութեան նուազակը ճշմարտութեան բացայայտումն է՝ արդարութեան վերականգնման համար»: Նա, վեր հանելով մեր ժամանակներում

հայագիտութեան ոլորտն առականող երեւոյթները եւ «ծառայել գիտութեանը թէ՛ ազգին» փակուղային ու շինծու երկրնսրանքը, մերժելով հայագիտութիւնը «բաղաբական հայագիտութեամբ» փոխարինելու հակագիտական ձգտումը, ամրագրում է դասական իրադասութեան սկզբունքային աւանդոյթը, համաձայն որի գիտութիւնը չի կարող առաջնորդուել բաղաբական դասուերներով, նուասակայարմարութեամբ, հաշուեկասութեամբ եւ «դոլիտիկա» խաղալով:

Վերահրատարակուող «Վեմի» առաջին համարում տեղ են գտել դասնագիտական, գրականագիտական, տնտեսագիտական եւ մշակութային այժմեական նիւթեր եւ արժեքաւոր հրատարակումներ, իսկ հանդեսի յաւելուածում բերուած վեցամեայ մասենագրութիւնը (1933-1939) ընթերցողին է փոխանցում «Վեմի» փառաւոր անցեալի խիստ հետաքրքրական համադասկերը:

Վերահրատարակուող «Վեմի» առաջին համարի գիտական նոր եւ չափազանց ուշագրաւ բազմաթիւ նիւթերից ուզում ենք յասկաղէս առանձնացնել Ռուբէն Սաֆրասեանի յոդուածը, որտեղ փաստուերն առաջին անգամ հրա-

դարակում է յայնի «Տեղահանութեան օրէնք»-ի ամբողջական տեքստը:

Այդ օրէնքի ընդունման համառոտ նախադասումները հետեւեալն է. Հայոց Մեծ Եղեռնի օրերին, 1915 թ. մայիսի 24-ին, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ, որտեղ խստագոյնս դատաւարեցին հայերի զանգուածային կոտորածները: Այս յայտարարութեան հետեւանքներից խուսափելու եւ կոտորածների դատաստանանքները միայնակ չկրելու նպատակով, Թալէսթըր նախաձեռնեց նշուած օրէնքի մշակումը, կառավարութեան որոշում դարձնելու ադա օսմանական խորհրդարանում վաւերացնելու ողջ գործընթացը:

Յայտօր գիտական քաջանակներին ծանօթ օրէնքի հայերէն թարգմանութիւնները կատարուած են բուն օրէնքի աղճատուած տարբերակներից, որոնք տարբեր ժամանակաշրջաններում քաջանառութեան մէջ են դրուել թուրք դատաւարանների կողմից: «Նշուած անձեռնարկներին ու շփոթմունքներին վերջ տալու լաւագոյն միջոցը, գրում է Ռուբէն Սաֆրաստեանը, «Տեղահանութեան օրէնքի» տեքստի դատարանական տարբերակի թարգմանաբար ներկայացումն է, ինչը հնարաւոր եղաւ իրականացնել միայն ձեռքի տակ ունենալով դատարանային «Թալէսթըրի վախճան»-ի 1915 թ. յունիսի 1-ի համարի ֆոտոդատարանը»¹:

Գտնելով, որ այս օրէնքի ստեղծման դատարանական դատարանների ամբողջութիւնը տարբարանքներ աղերսներ ունի Հայաստանի ու հայութեան ներկայիս քաղաքական իրադարձութիւնների, Թուրքիայի կողմից Հայոց Տեղահանութեան իրողութեան ուրացման եւ հայ-թուրքական միջոցական յարաբերութիւնների իմաստցիտ գործընթացի հետ, ցանկանում ենք, որդէս «փունջ բանի», առանց մեկնաբանութեան, ներկայացնել օրէնքը մեր ընթերցողներին.

«**Յօդուած 1.** Պատերազմի ժամանակ բանակների, զօրաբանակների եւ դիվիզիաների հրամանատարները եւ նրանց տեղակալները եւ առանձին դիւրերի հրամանատարները, բնակչութեան կողմից կառավարութեան հրամանների, երկրի դատարանութեան ու հանգստի ապահովման հետ կապուած գործողութիւնների եւ միջոցա-

ռումների դէմ ընդդիմութեան, զենքով յարձակման եւ դիմադրութեան որեւիցէ դրսեւորում տեսնելու դէպքում լիազօրուած եւ դատարան են անյաղաղ զենքի ուժով ամենախիստ ձեռով նրանց խելքի բերել եւ յարձակումն ու ընդդիմանալը հիմնովին ոչնչացնել:

Յօդուած 2. Բանակների եւ առանձին զօրաբանակների եւ դիվիզիաների հրամանատարները, ռազմական յասուկ օրէնքների վրայ հիմնուելով, լրտեսութիւն կամ դատաւանութիւն կանխագալով, կարող են գիւղերի եւ գիւղաբնակավայրերի բնակչութեանն առանձին-առանձին կամ զանգուածաբար այլ բնակատեղիներ ուղարկել եւ բնակեցնել:

Յօդուած 3. Սոյն օրէնքը գործողութեան մէջ է մտնում հրապարակման օրուանից:

Յօդուած 4. Սոյն օրէնքի դրոյթների գործադրման համար դատարանական եւ գլխաւոր հրամանատարի տեղակալը եւ ռազմական նախարարը²:

Բարեհաճեցի հրամայել, որ օրինականութիւնն ապահովելու նպատակով սոյն օրէնքի տեքստը ներկայացուի ընդհանուր ժողովի նիստում³, ժամանակաւորապէս դրուի գործողութեան մէջ եւ յատկուրի դէտեքտեան օրէնքներին:

13 Ռեջեօկի 1333, 14 մայիսի 1331⁴

Ռեւազ⁵,

Սադրազամ Մեհմեդ Սաիդ⁶,

գլխաւոր հրամանատարի տեղակալ եւ ռազմական նախարար՝ Էնվեր»:

1 Սաֆրաստեան Ռ. Ա., «Հայոց ցեղասպանութեան դէտեքտեան ծրագիրը», «Վէմ» համահայկական հանդէս, Երեւան, 2009, ամիւրիւն յունիս, թիւ 1 (26), էջ 48-62:

2 Այդ դատարանները զբաղեցնում էր Էնվեր փաշան:

3 Նկատի ունի օսմանեան խորհրդարանի վերին եւ ստորին դատարանների համատեղ նիստը:

4 Համադատարանականում է 1915 թ. մայիսի 27-ին:

5 Սուլթան Մեհմեդ Ռեւազ V:

6 Սադրազամ Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշա:

«Ազատ շուկայի» ձգնաժամը և հակակշիռ մոդելները

Բենիամին Միրզոյան
Վլադիմիր Գրիգորյան

Համակարգային ձգնաժամ

Արևմուտքում մեծ հետաքրքրություն է առաջացել Կ. Մարսի «Կառնիսալի» նկատմամբ: Ներկայիս ֆինանսասնտեսական ձգնաժամն ունի ավելի խոր և օբյեկտիվ դասառևտրային սրված է «Կառնիսալում»: Հիշեցնենք, որ մարսիսական սնտեսական ուսմունքում կառնիսալիզմը դիտարկվում է որդես առաջավոր, բայց ինֆլացիոն, խոր հակասական ու անցողիկ հասարակարգ:

«Ազատ շուկան» կամ «ազատ մրցակցությունը» արդեն 19-րդ դարի վերջերին հանգեց մենաձեռ-

հային ընկերությունների, ֆինանսական կառնիսալի ու օլիգարխիայի առաջացմանը, անխուսափելի դարձնելով սնտեսական ձգնաժամերը, սոցիալական ցնցումները և դաստիարակները:

Ի վերջո, «ազատ շուկայի» հիման վրա զարգացող սնտեսակարգն ավելի սուր բնույթ է սալիս բազում գործազուրկ հիմնախնդիրներին. աշխարհի ռեսուրսները, հարսությունը և եկամուտները, անցնելով նեղ օրջանակի մարդկանց, կուսակվում են կորդորացիաների ու ղեկավարների ձեռքում: Այս հիմնախնդիրները մեղմացնելու ՄԱԿ-ի բոլոր հռչակագրերն ու ջանքերը դառնում են աղարդյուն, չսալով դրական արդյունք:

Համաաշխարհային ՀՆԱ-ի 55%-ը, առևտրի և կառնիսալի միջազգային հոս-

Ներկայիս ֆինանսասնտեսական գլոբալ ձգնաժամը ևս մի անգամ աղարդացեց, որ նեոլիբերալիզմի գաղափարախոսությունը և այդ հիման վրա կառուցված սնտեսական մոդելները ոչ միայն իրենց աղարդել են, այլև դարձել են մարդկային հասարակության համար մեծագույն չարիք: Մենք «Դրոշակի» էջերում (N 1, 2008) անդրադարձել ենք «նեոլիբերալիզմի հաղթարշավին» և դրա կործանարար հետևանքներին: Այս հոդվածում կփորձենք ցույց տալ «ազատ շուկայի» ինֆլացիոնիզմը և անխուսափելի ձգնաժամը, ներկայացնելով նաև սոցիալ-սնտեսական այլընտրանքային մոդելները, որոնք ունեն ակնհայտ ասպեկտություններ և կարող են ստեղծել առավել արդարացի և հարմունիկ զարգացող հասարակարգ:

բերի գերակշռող մասը կենտրոնացած է աշխարհի բնակչության 15 %-ը կազմող զարգացած 30 երկրների ձեռքում: Այս երկրներում են հիմնականում գործում վերազգային մենաձեռնարկային ընկերությունները, որոնք հսկում են աշխարհի ՀՆԱ-ի ավելի քան 1/4-ը և առևտրի 1/3-ը: ԱՄՆ-ի առաջին 3 միլիարդատերերի հարսությունը գերազանցում է ադրիանոս երկրներում մոտ 500 մլն. մարդկանց վասակը, որոնք իրենց գոյությունը փառ են սալիս՝ օրական ծախսելով մինչև 1\$:

Ժամանակակից սնտեսությունն անհամեմատ զարգացած, փոխկառնված ու ինտեգրված է, շուկան գերակշռում է բազմաբնույթ աղարդներով ու ծառա-

յություններով: Ցանկացած ֆիզ քե աս ցնցում, հասկադես ֆինանսական հասվածում, սալիս է եղթայական ռեակցիա, առաջացնելով անվսահություն ու սագնադ ամբողջ աշխարհում: Ընդ որում գորբալացված աշխարհը դարձել է միաբևեռ, ամենուրեք փաթաթվում են ամերիկյան ադրելակերողը և սնեսական զարգացման «ազասական» մոդելը:

Հրավի, դասահական չէ, որ ժամանակակից սնեսագիտության սեսության հեղինակները և այդ բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիրները գերազանցադես ամերիկացիներ են, որոնք կոչված են ջասագովելու նեղլիբերալիզմի և մոնեսարիզմի մոդելների վրա խարսխված «ազաս» եուկայական հարաբերությունների հրաւազործությունները:

Այդ «հրաւազործությունների» արում հասուկ սեղ է գրադեցում ամերիկյան դուարը, որի գերարարության միջոցով, սկսած 1970-ական թվականներից, ԱՄՆ-ին հաջողվել է թալանել այլ ժողովուրդներին ու դեսություններին, նրանց հաւիին ուռձացնել նաև ռազմական ծախսերը, ձեռնարկել արսաֆին նվաձողական գործողություններ: Որոհ հաւարկներով, ԱՄՆ-ը սդառում է աշխարհում արսադրվող ՀՆԱ-ի մոս 40 %-ը, թեն նրանց իրական բաժինը համաաշխարհային ՀՆԱ-ի մեջ կազմում է 15-20 %:

Արդեն կես դար է, ինչ ԱՄՆ-ը ադրում է դարսֆով, որի սեսակարար կեիոր երկրի ՀՆԱ-ի նկասմամբ 2006 թ. կազմել է 65 % (8,5 սրլն. \$): Այսեղ 300 մլն. բնակչության գերակեռող մասը նույնդես խրվել է դարսֆերի մեջ, ձգսելով հիդոթեկային սկզբունֆով ձեռք բերել բնակարան, ունենալ սեփական բիզնես, ոգսվել ժամանակակից նյու-



թական ու հոզուր բարիֆներից: Մյուս կողմից՝ հասարակ մարդկանց իրական եկամուսները չեն ավելանում, խորանում է սոցիալական բևեռացումը: Արդյունֆում՝ փլուզվում է «ազաս եուկայի» վրա ձևավորված ֆինանսական ու սոցիալ-սնեսական բուրգը:

Եուկայական սնեսությանը յուրահասուկ են փողի կուտքը և սդառման սենչը: Բնությունն արդեն հոզնել է մարդուց, որն ազահորեն ֆամում է երկրի ռեսուրսները: Մարդը գնալով ավելի է նմանվում գիւասիչ այն կենդանուն, որը հոհոսում է իր գոհին, բայց լիովին չի խժռում: Հասարակության մի սվարխավ աշխարհի սարբեր գեդասեսիլ վայրերում գնում է առանձնասներ, միաժամանակ՝ ավելի աս ընսանիֆներ փողոց են նեսվում հիդոթեկային վարկը չվձարելու դասձառով:

Մդառման ժամանակակից հասարակությունում կադիսալը խու-

սափում է սնեսության իրական հասվածից, գերադասելով ծառայությունների այն ոլորսները, որոնցում ադահովվում է առավել արագ արջանառությունը և գերահույթի սսացումը: Նույն ԱՄՆ-ում ՀՆԱ-ի մոս 80 %-ը սսեղծվում է ծառայությունների ոլորսում, ինչը հիմնականում ընդլայնվում է սարբեր սեսակի եոու-բիզնեսի, գովազդի, դորսաբույծ վերնախավի սդասարկման ֆինանսա-վարկային սդեկույասիլ գործարքների հաւիին:

Բավական է նեել, որ միջազգային ֆինանսական կենսրոններում 2006 թ. կասարվել են մոս 400 սրլն. \$ բորսային գործարքներ, բաժնեսոմսերի ծավալի արժեֆը կազմել է 51 սրլն. \$ (որից ԱՄՆ-ին բաժին է ընկնում 40 %-ը), իսկ դարսասոմսերինը՝ 69 սրլն. \$: Եվ

ահա այս խելահեղ աշխարհում բոլորն էլ ձգտում են ինչ-որ բան գնել ու վաճառել, ակնկալելով ինչ-որ բան շահել: Ի վերջո, առաջանում է մի հսկայական փուչիկ, որը վաղ թե ուշ մեծ է դառնում:

Անցումային օրջանի դասերը

Անցումային օրջանում Ասկարունֆային նշանակություն ունեն այն դրույթը, թե որքանով մեծ է զանազան միջոցների օգտագործման համարային հասվածքը և շահույթի կարգավորիչ դերը շուկայական հարաբերությունների մայմաններում: Նախկին եվրոպական սոցիալիստական որոշ երկրներ, մասնավորապես Սլովենիան, Չեխիան, Սլովակիան, Հունգարիան, Լեհաստանն արդեն 90-ական թվականներին հաղթահարեցին սրանաֆորմացիոն ձգնաժամը զարգալիս այն դասառնով, որ ընթացքում Եվրոինտեգրման ուղիով, զանազան մեթոդներով ծախսերի բարձր մակարդակը (ՀՆԱ-ի նկատմամբ 42-45 %), միաժամանակ կանխելով եկամուտների անհավասարության խորացումը:

Ցանկացած սնտեսական բարեփոխում մեծ է սա դրական արդյունք: Օրինակ կարող են ծառայել սոցիալիստական բարեփոխումները և ՆԷՊ-ը, որը հնարավորություն սկսեց բոլորիսյան Ռուսաստանը փրկել վերահաս կործանումից: Խորհրդային սնտեսական համակարգը փլուզվեց զարգալիս այն դասառնով, որ գործաշուկայան կեղծ բարեփոխումները սկսվեցին ոչ թե սնտեսական բազիսից, այլ վերնաշերտից:

Ռուսաստանը, լինելով բնական ռեսուրսներով աշխարհի ամենահարուստ երկիրը, անցումային օրջանում ընտեց արմատական բարեփոխումների ուղին, մի ամ-

բողջ սասնամյակ խարխալեց սնտեսական անկման ու լճացման ճիւղներում և միայն նավթային գործոնի հաճախ երկու սասնամյակ հետ կարողացավ վերականգնել 1988-1989 թթ. ՀՆԱ-ի մակարդակը: Թվում էր, թե մեծ է լինեք հակառակը, քանի որ Ռուսաստանն ունի հսկայական ներքին շուկա և բազմակողմանի հաղորդակցության միջոցներ աշխարհի բոլոր երկրների հետ, թոթափելով նաև այլ հանրադասություններին ու սոցերկրներին ցածր գներով էներգառեսուրսներ և

նաբերական ու գիտական ներուժը: Եվ, ամենակարևորը, նա նորից հայտնվել է առավել խոր ու ծանր սնտեսական ձգնաժամի մեջ, քան որևիցե այլ երկիր: Եթե հիմն ընդունենք ԱՊՀ միջոցառական վիճակագրական կոմիտեի սվալները, ադա Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի անցումային օրջանի սնտեսական կարևորագույն ցուցանիշները 2007 թ. ունեցել են հետևյալ դասերը (1991 թ. =100):

	Ռուսաստան	Ուկրաինա	Բելառուս
Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)	109,2	79,4	152,6
Արդյունաբերական արտադրանք	84,8	115,5	187,5
Գյուղատնտեսական արտադրանք	82,5	70,2	103,5

հում մասակարարելու բեռը: Անկասկած, սնտեսության սոցիալիստական համակարգն ունեք մի ցարք թերություններ: Խորհրդային Միությունն այդդես էլ չկարողացավ լուծել զարենային ու բնակարանային հիմնախնդիրները: Սակայն, ինչդե՞ս բացատրել այն արտառոց փաստը, որ Ռուսաստանը և Ուկրաինան, որոնք 1981-1985 թթ. միջին սարեկան սվալներով ադահովում էին Միության գյուղասնտեսական համախառն արտադրանքի 68,5 %-ը, այդդես էլ մինչև հիմա չեն վերականգնել այդ թվականների գյուղասնտեսական արտադրանքի մակարդակը:

Նույն թվականներին (1981-1985 թթ.) Ռուսաստանում սարեկան միջին հաճով 2,5 անգամ ավելի բնակարաններ են ցահագործման հանձնվել, քան 2001-2005 թվականներին: Ընդ որում, ներկայումս կառուցվող բնակարանները մասշտի չեն անգամ հասարակության միջին խավի համար: Ռուսաստանը կորցրել է նաև նախկինում ձեռք բերած արդյու-

Ի սարբերություն Ռուսաստանի և Ուկրաինայի, Բելառուսում քարոքանդ չարվեց սոցիալիստական համակարգը, զանազան մեթոդներով սնտեսության հանրային հասվածքը և շահույթը վճռորոշ դեր խաղաց շուկայական սնտեսության կարգավորման գործում: Մինչդեռ Ռուսաստանը և Ուկրաինան ընտեցին կադիսալի նախասկզբնական կուսակման վասթարագույն սարբերակը, տեղի ունեցավ ազգային հարսության աննախադեղ վերաքաճում և բացահայտ կողորոտ: Այդ երկրների ՀՆԱ-ի ավելի քան 80 %-ը փաստրեն հսկում է օլիգարխիական կադիսալը: Միլիարդատերերի թվով ու կուսակած հարսությամբ Ռուսաստանն ԱՄՆ-ից հետ գրավում է 2-րդ տեղը:


ԱՊՀ երկրների ամենահարուստ միլիարդատերը Ռինաս Ախմեդովն է, որը 42 սարեկան հասակում կարողացել է 2008 թ. դրությամբ կուսակել 31,1 մլրդ. դոլար, սարբեր մեքենայությունների միջո-

ցով իր ձեռքը վերցնելով Ուկրաինայի մեսալուրգիայի, ածխի, էներգետիկայի, սննդի արդյունաբերության, բանկային համակարգի առևտրի մասը: Նրա կադիստրալն ավելի մեծ է, քան Ուկրաինայի դեպի արդյունաբերության ուղևորվածը 2008 թ. գնահատվել է 112,8 մլրդ. դոլար, այն դեպքում, երբ 2007 թ. եղել է ընդամենը 64,5 մլրդ. դոլար:

Բելառուսում չկան միլիարդատերեր, մինչդեռ բնակչության մեկ շնչի հաշվով 2007 թ. «ավստրիացի» այդ երկրում թողարկվել է մոտ 2 անգամ ավելի ռուս արդյունաբերական արտադրանք, քան «դեմոկրատական» Ուկրաինայում: Գյուղատնտեսության արտադրանքով այդ տարբերությունը կազմում է 87 %, արտադրանքի աղանգագրության ծավալով՝ 2,3 անգամ, բնակարանային շինարարությամբ՝ 2,8 անգամ (2006 թ.):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Բելառուսում դեպքերը իր ձեռքում կենտրոնացնում է ՀՆԱ-ի ավելի մեծ մասը, քան անգամ 1990 թվականին: Այստեղ համախմբված բյուջեի եկամուսները ՀՆԱ-ի նկատմամբ 1990 թ. կազմել են 35,3, իսկ 2005 թ.՝ 48,4 %, մինչդեռ Հայաստանում՝ համադասասխանաբար 41,4 և 20,1 %: Պարզ է, որ նման բյուջեով մեր հանրապետությունը ոչ միայն չի կարող դառնալ «սոցիալական» երկիր, այլև դիմակայել համաաշխարհային ֆինանսա-սնտեսական ճգնաժամի ցնցումներին:

Հայաստանն անցումային օրոշանի գրեթե միակ երկիրն է, որտեղ արմատական սնտեսական բարեփոխումները, վիճակագրական սվյալներով, սվել են արտակարգ դրական արդյունք: Համաաշխարհային բանկի (ՀԲ) գնահատմամբ, «Հայաստանն անցումային օրոշանից հետո արագ վերականգնվեց»,



Չ. Հեյրաթյան

ցուցադրելով «գարգացման հուսադրող միտումներ»:

ՀՀ ԱՎԾ-ի և ՀԲ-ի «Հայաստանի սոցիալական դասերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցում (2006 թ.) նշվում է. «Իրական ՀՆԱ-ն 1991-1993 թվականների ընթացքում նվազելով 55 %-ով, 1994 թվականից սկսել է աճել՝ աղաղակելով տարեկան միջինը 7,7 % աճի տեմպ և վերականգնել 1990 թվականի մակարդակը 2004-ին» (էջ 39):

Չարմանք է դասառնում, թե ինչո՞ւ ՀՀ ԱՎԾ-ն և ՀԲ-ն համոզված են, որ Հայաստանի սնտեսական անկումը տեղ է միայն 3 տարի և երկու անգամ, երբ նույն զեկույցում նշվում է. «Իրական միջին աղաղակարձը 1990-ականների սկզբին աղաղակել կտրուկ է նվազել, 1994 թ.-ին կազմելով

1990 թվականի մակարդակի ընդամենը 7 տոկոսը»: Կարո՞ղ է, արդյոք, աղաղակարձում զեկույցի մի երկիր, որտեղ տնտեսությունը 2 անգամ անկում աղաղակ, իսկ իրական աղաղակարձը՝ ավելի քան 14 անգամ: Աղաղակարձի հրաղակ բացաղակում է:

Համեմատության համար նշենք, որ 1991-1995 թթ. Բելառուսում արձանաղակվել է ՀՆԱ-ի անկում՝ 35 %, իրական դրամական եղանակներինը՝ 49, իրական միջին ամսական աղաղակարձը՝ 44 %: Հայաստանում ՀՆԱ-ն ձևաղաղակող և բնակչության կենսամակարդակը բնութաղաղակող բոլոր ցուցանիղակների անկումը 1991-1994 թթ. դասնաղաղակ գրանղակվել է 10-15 անգամ, որի կոնկրետ վիճակաղաղակական



Յ. Թինբեքեան

սվյալները բերված են նաև «Դրօշակի» (N 1, 2008) էջերում:

Յավալին այն է, որ մինչև հիմա ՀՀԸ-ական իշխանության օրոք կեղծված վիճակագրական սվյալները մնում են օրջանառության մեջ, առիթ սալով կեղծարարներին գովերգելու անկախության առաջին սարիներին իրականացված «ազասական» բարեփոխումները: Իրոք, եթե հիմք ընդունենք ԱՊՀ միջդեղական վիճակագրական սվյալները, ապա Հայաստանը 2007 թ. գերազանցել է 1991 թ. ՀՆԱ-ի մակարդակը 76 %-ով, մինչդեռ ԱՊՀ երկրներն ամբողջությամբ վերցրած՝ 9 %-ով: Սակայն, նույն աղբյուրի համաձայն, Հայաստանի սեսակարար կոչոքը ԱՊՀ երկրների ընդհանուր ՀՆԱ-ում 1991 թ. կազմել է 0,8, իսկ 2007 թ.՝ 0,5 %:

Այս սվյալներից դժվար չէ անել հետևություն, որ Հայաստանը դեռևս չի հաղթահարել անցումային օրջանի ձգնաժամը, չնայած վերջին 8 տարիներին (2001-2008 թթ.) նրա ՀՆԱ-ն ավելացել է 2,5

անգամ: Եթե գնահատենք դրամ-ռուրլու փոխարժեքով, ապա Հայաստանը բնակչության մեկ շնչի հաշվով իր սնեստական հզորությամբ (ՀՆԱ) զիջում է Ռուսաստանին 3,2 անգամ, իսկ բնակչության դրամական եկամուտներով՝ 3,8 անգամ:

«Շուկայական սոցիալիզմի» մոդելը

Հայտնի է, որ Սոցիստերնի անդամ կուսակցությունները, այդ թվում նաև ՀՅԴ-ն, իրենց ծրագրային հիմնադրույթները մշակել են սոցիալիստական (ընկերվարության) գաղափարախոսության հիման վրա, մերժելով թե վայրի կառիսալիզմը և թե բռնասիրական կոմունիզմը: Կարելի է ասել, որ այդ գաղափարախոսության հիմքում ընկած է կառիսալիզմի ու սոցիալիզմի առավելությունների միավորումը և խելացի օգտագործումը (այսպես կոչված, կոնվերգենցիայի սեսությունը):

Այդ սեսության կողմնակիցները (Ջ. Գալլբրայսը, Պ. Սորոկինը, Յ. Թինբեքեանը, Ռ. Արոնը) առաջ քաշեցին «խառը հասարակություն» սեսեղծելու գաղափարը, զսնելով, որ աղազայում «կառիսալիզմի ու կոմունիզմի դրական արժեքները կգումարվեն» և մարդկությունը կխուսափի սնեստական ձգնաժամերից ու սոցիալական ցնցումներից: Այդդիսի հասարակությունում, Յու. Թինբեքեանի կարծիքով, կառիսալիզմից կդահողանվի 3 սկզբունք՝ մասնավոր սեփականությունը, Եահույթ սսանալու ձեռնարկասիրական ձգումը, Եուկայական համակարգը: Սոցիալիզմից նույնդես կյուրացվի 3 սկզբունք՝ հավասարությունը, արսադրության նկասմամբ բանվորական վերահսկողությունը, սնեստության դլանավորումը:

Դիսարկելով առանձին երկրների և ինեսգրացիոն խմբավորումների սոցիալ-սնեստական զարգացման դինամիկան և միսումները, մենք գա-

լիս ենք այն համոզման, որ Եուկայական ու դլանային սնեստությունների առավելությունների զուգակցումը, դեսության կարգավորիչ դերի դահողանումն ու բարձրացումը սալիս են դրական արդյունք, կանխելով միաժամանակ «ազաս Եուկայի» ավերիչ հեսեսանքները և սոցիալական խոր բեսեռացումը:

Վերցնենք Եվրոմիության երկրները, որոնց սոցիալ-սնեստական քաղաքականության մշակման ու իրականացման խնդրում որոշիչ դեր են խաղում Սոցիստերնի անդամ սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական և լեյբորիստական կուսակցությունները: Եվրոմիությունը «Եուկայական սոցիալիզմի» սիդիկ օրինակ է հանդիսանում, թես դահողանվում են ազգային որոշակի առանձնահատկությունները:

Եվրոմիության 6 հիմնադիր անդամները (Ֆրանսիա, Գերմանիա, Իսալիա, Հոլանդիա, Լյուքսեմբուրգ) 1957 թ. Հոմմի դայմանագրով սեսեղծեցին աղրանքների, ծառայությունների, կառիսալի, աԵխասուժի ընդհանուր Եուկա, վարելով սոցիալ-սնեստական համաձայնեցված քաղաքականություն, նդասակ հեսադնդելով բարձրացնել բոլոր երկրների բնակչության բարեկեցությունը և մերձեցնել ազգային սնեստությունները:

Եվրոմիության անդամներն ավելացել են, հասնելով 27-ի: Այժմ նրա դոները ծեծում են Թուրքիան, Խորվաթիան, Մակեդոնիան: Եվրոմիսեսգրման ուղին է ընսրել նաև Հայաստանը: Այս ձգումը դայմանավորված է նրանով, որ Եվրոմիությունը երաԵխավորում է իր անդամների սնեստական անվսանգությունը և կայուն զարգացումը, աղահովում նրանց բնակչության կենսամակարդակի բարձրացումը և մերձեցումը:



են մարդու կողմից անկախ գործող բնական ու սնտեսական օբյեկտիվ օրենքները: Մարդկությունն այսօր կանգնած է էկոլոգիական աղետի առջև: Բնությանը հասցրած վնասը փոխհասուցելու համար դառնալից վնաս է հասկացնել համաշխարհային ՀՆԱ-ի առնվազն 6 %-ը, բայց անգամ զարգացած երկրները այդ նդասակով ծախսում են միայն իրենց ՀՆԱ-ի 1,7 %-ը:

Շատերը գիտակցում են, որ անհրաժեշտ է իրականացնել համակարգային փոփոխություններ, հրաժարվել նեոլիթերալիզմի գաղափարախոսությունից և վերադառնալ ֆեյնսյան ուսմունքի ակունքներին, ըստ որի կադիստիկայի բոլորովին էլ ինֆնակարգավորվող համակարգ չէ: Պետությունը ղեկավարում է իր վրա վերցնի մակրոսնտեսական հավասարակշռությունն ադառնվելու ողջ դասասխանասվությունը, նոր աշխատանքների ստեղծու-

մը, վերացնի եկամուսների ձևավորման ու վերաբաշխման ներկայիս արասավոր համակարգը, նդասի բնակչության լայն խավերի գնողունակության բարձրացմանը, որի համար դառնալից է նաև ավելացնել դեսական ծախսերը՝ առաջին հերթին դրոգրեսիվ ուղղակի հարկման միջոցով: Միայն կարգավորվող ու դրամավորվող հասարակությունը կարող է կրկնակի-եռակի կրճատել եկամուսների անհավասար բաշխումը, ինչդեռ նաև անարտադրողական հսկայական ծախսերը, ուղղելով ֆինանսական լրացուցիչ միջոցները բնության դառնալիցի ու աղբասության հաղթահարման նդասակներին:

Մակայն ներկայումս իրականացվող հսկաձգնաժամային միջոցառումներն, ըստ էության, չեն շտափում սնտեսական մոդելների վերանայման և համակարգային փոփոխությունների հիմնահարցերը: Թե ԱՄՆ-ում, թե Ռուսաստանում և այլ

երկրներում դեսությունը ձգնում է առաջին հերթին փրկել բանկային ու արդյունաբերական խոռոգույն մենաշնորհային ընկերությունները, նրանց սրամարտիվ հսկայական ֆինանսական միջոցներ: Դա գրեթե նույնն է, երբ գեների վրա թավալվող հարբեցող մարդուն սթափեցնելու համար նրան նորից խմիչք է հրամցվում:

Այնդիսի սդավորություն է ստացվում, որ ֆինանսա-սնտեսական համընդհանուր ձգնաժամի առաջացման ու խորացման գործընթացում անդրազգային մենաշնորհային միավորումներն ու միլիարդատերերը ոչ մի մեղք չունեն: Կարելի է նույնիսկ ափսոսալ, որ նրանք կորցնում են իրենց կուսակած կադիստի մի մասը: Այսդեռ, ՌԴ կառավարությունը «աղբասացող» Ռ. Աբրամովիչին սրամարտի է 2 մլրդ. դոլար, ֆանի որ նրա մոտ առաջացել է 10 մլրդ. դոլար դարսֆ:

Այնուամենայնիվ, «չկա չարիք, առանց բարիքի»: Գորբալ ձգնաժամը բացահայսեց արհեսականորեն ուռձացված ֆինանսա-վարկային համակարգի արասավոր կողմերը, ինչդեռ նաև սարբեր սեսակի սդեկուլյասիվ գործարքները: ձգնաժամից դուրս գալու ամբողջ դասասխանասվությունն ընկավ դեսության վրա, որը սսիդված էր վերանայել իր ներքին և արսաֆին սնտեսական ֆադաֆականությունը:

ձգնաժամը նաև ցույց սվեց, որ համաշխարհային արենայում փոխվել է ուժերի հարաբերակցությունը, և ամերիկյան դոլարը այլևս չի կարող կասարել միջազգային սարադրամի ֆունկցիան: Արևմուսֆն ասիձանաբար կորցնում է իր գերիշխող և թելարող դիրքերը: Ձևավորվում են դեսությունների սարաձֆային նոր խմբավորումներ, որոնցում նշա-

նակալից դեր կխաղան Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանը, Բրազիլիան: Այդ 4 երկրների ՀՆԱ-ն 2020 թ. կկազմի համախառնային ՀՆԱ-ի մոտ 37 %-ը, 2005 թ. 26,6 %-ի փոխարեն: Մինչդեռ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի և Իսպանիայի ՀՆԱ-ն 2005 թ. կազմել է համախառնային ՀՆԱ-ի 38,7 %-ը, իսկ 2020 թ. կդառնա 32 %:

Այս կանխատեսումներն արվել են նախքան գործառնալ ճգնաժամը: Ընդ որում, զարգացող երկրները դեռևս չունեն հազեցված ներքին շուկա և կարող են ավելի փչկորուսներով հաղթահարել ֆինանսա-սնտեսական ճգնաժամը: Փայլուն օրինակ է նորից հանդիսանում Չինաստանը, որի էժան ու ոռակով ամրանները լայն սղառում էին գնում բոլոր երկրներում: Ճգնաժամը փակել է արտաքին ճանադարհը: Ի՞նչ անել: Երկրում գյուղական բնակչության թիվը կազմում է 750 մլն. մարդ, որոնց գնողունակությունը խիստ ցածր է: Հեճադես, ողես է արտադրել գյուղացու համար մասչելի գներով մեքենա, հեռուստացույց, սառնարան, բջջային հեռախոս և այլն: Գների իջեցմամբ խրախուսելով ներքին սղառումը, չինական սնտեսությունը կարողանում է խուսափել ճգնաժամից և 2009 թ. սղասվում է երկրի ՀՆԱ-ի 9 % հավելաճ:

Ուճագրավ են նաև հեսկյալ սվյալները: Չինական մասնավոր բանկերը հրաժարվել են իջեցնել հիդոթեկային սոկոսադրույքները: Ի հակակեռ, Ազգային բանկն իր վրա վերցրեց հիդոթեկը՝ 7 %-ով, և մասնավոր բանկերը սսիդված եղան հեսկելու նույն օրինակին: Ճգնաժամը հաղթահարելու նղասակով ողեսությունը 220 մլրդ. դոլար հասկացրել է նոր երկաթգծերի, ֆաբրիկաների, կինոթատրոնների,

խոճոր խանութների կառուցման համար, մոտակա գյուղական բնակչությանը սալով լրացուցիչ աեխասանի, դրանով իսկ բարձրացնելով նաև գնողունակ ողահանջարկը:

Ընդամենը 6 ամսվա ընթացում չինացիներին հաջողվեց ազգային սնտեսությունը դնել ներքին սղառման վրա, սեղծել նավթի ողահուսներ (բանի դեռ էժան է), կառուցել գազամուղներ, գնել Եվրոդայի սնանկացած բանկերը, հրաժարվել դոլարային գործարքներից: Եվս 10 սարի, աեխարհի բանկային համակարգի 1/5-ը կողականի Չինաստանին, իսկ նրա ՀՆԱ-ն կգերազանցի ԱՄՆ-ի ՀՆԱ-ն 25 %-ով:

Համաեխարհային ՀՆԱ-ում Հայաստանի բաժինը կազմում է ընդամենը 0,02 %: Մարդկային ներուժի զարգացման համաթվով (ՄՆԶՀ) Չինաստանը գրավում է 81-րդ սեղը, իսկ Հայաստանը 83-րդ սեղը (2005 թ.): Ընդ որում 1,3 մլրդ. բնակչություն ունեցող Չինաստանում կյանքի սղասվող միջին սևողությունը կազմում է 72,5 սարի, իսկ մեկ ճնչին ընկնող ՀՆԱ-ն 6757 դոլար (գնողունակ համարժեքով): Այդ նույն ցուցանիքները 3,2 մլն. բնակչություն ունեցող Հայաստանում կազմել են համաղասասխանաբար 71,7 սարի և 4945 դոլար: Միայն կրթական մակարդակով Հայաստանն ունի որոշ առավելություն:

Ի՞նչն է խանգարում Հայաստանին հեսկելու Չինաստանի օրինակին: Առաջին հայացից թվում է, թե ՀՀ Կառավարության հակաճգնաժամային ֆայլերն ու ծրագրերը նույնղես ուղղված են հայրենական արտադրության ողաեղանությանն ու խթանմանը, նոր աեխասասեղերի սեղծմանը, սոցիալական հարցերի լուծմանը: Մակայն այս բոլոր ջանքերը չեն կարող կանխել սնտեսական ճգնաժամի խոռացումը, ֆանի դեռ այսեղ սիրաղեսում են չկարգավորվող շուկայական հարաբերությունները, մենաեռոհային ու սվերային սնտեսությունը, օղիգարխիան,



անձնական ահի գերաղասումը:

1,3 մլրդ. չինացիներն ունեն մեկ ձգսում և մեկ կարծիք, իսկ 3,2 մլն. հայերս՝ 3,2 մլն. սարսեսասկ կարծիք: Փորձեք համոզել Հայաստանի ֆաղաֆացուն գնել միայն հայկական սիգարես: Ոչինչ չի սսացվի: Այսղես, 2007 թ. ներմուծվել է 73,7 մլն. դոլարի ծխախոս և ծխախոսի արղյունաբերական փոխարինողներ, մինչդեռ արտահանվել է միայն 4,2 մլն. դոլարի: Անգամ երկնիե սնտեսական աճի ողայմաններում վասթարացել է երկրի արտաքին առևսրական հաեվեկեռը: Եթե 2004 թ. արտանքների ներմուծումը գերազանցել է արտահանումը 1,8, աղա 2007 թ.՝ 2,7 անգամ (2008 թ.՝ 4,1, 2009 թ. առաջին եռամսյակում՝ 5,3 անգամ):

Հայաստանը հայսնվել է սնտեսական ավելի խոր ճգնաժամի մեջ նաև այն ողասձառով, որ սնտեսական «հրաեքի» վերջին 10 սարիներին արղյունաբերության և գյուղասնտեսության մեջ լուրջ ներղումներ չեն կասարվել: Մասնավոր կաղիսալը խուսափել է սնտեսության իրական հասվածից և գյուղական վայրերից: Արղյունում մենք ունենք խիստ դեֆորմացված և անմրցունակ սնտեսություն:

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ավագ Հարությունյան

Սևրի պայմանագիրը հայկական հարցի և հայ դիվանագիտության երկարամյա պատմության ամենից հետաքրքիր դրվագներից է: Իզուր չէ, որ դեռևս այդ պայմանագրի ստորագրումից առաջ քեմալականները հայտարարում էին հայերին ոչ մի թիզ հող չգիջելու իրենց վճռականության մասին¹: Եվ անգամ 1922 թ., երբ Մուստաֆա Քեմալին թվում էր, թե Սևրի պայմանագիրը ընդմիշտ պատմության գիրկն է անցնում, նա շարունակում էր հայտարարել, որ «Սևրի պայմանագրի իրականացումը մեզ համար կնշանակեր տնտեսական և քաղաքական առումներով մահվան դատավճիռ»²:

1920-ականներին արդեն իսկ կայացված դատավճիռը չգործադրվեց, սակայն Լոզանից հաղթականորեն դուրս եկած Թուրքիան մինչ օրս էլ լավ է գիտակցում, որ այդ ամենը տվյալ դաշրջանում իր համար ստեղծված բարենպաստ կացության արդյունքն էր, ինչը կարող է փոխվել՝ կրկին միջազգային քաղաքականության օրակարգ մտցնելով Սևրի պայմանագրի դրույթները:

1. Սևրի պայմանագրի քաղաքական իմաստը

Սևրի պայմանագիրը հայկական հարցի

պատմության ոչ միայն հերթական փուլն էր, այլև առանձնահատուկ էր իր հողվածների բովանդակությամբ և ակնկալվող հետևանքներով: Թեպետ այն գործնական առումով չլուծեց Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության հակամարտության խնդիրը, սակայն այնքան կարևոր նշանակության իրադարձություն էր, որ, ինչպես Ն. Ադրնցն էր նշում, «Վերջապես Եվրոպան քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջապես խորտակելու, գեթ դուրս քաշելու թունավոր սողունի ատամները, որին նա դարեր շարունակ սնուցել էր իր իսկ սեփական քաղաքակրթության կրծքին»³:

Իր քաղաքական նպատակների առումով Սևրի պայմանագիրն ուներ երկակի բնույթ. **առաջին**, զգալիորեն մասնատելով Օսմանյան կայսրությունը, Սևրի պայմանագիրը Թուրքիան փաստորեն վերածում էր ազգային պետությունների համակարգի, ինչը այդ սկզբունքի ամենա-

1. Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 606-607:

2. Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, Москва, 1966, сс. 150, 227.

3. Ադրնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 13:

ջերն պաշտպան, ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի երազանքն էր: Քանզի պետք չէ մոռանալ, որ այդ նույն կայսրությունը՝ իր հսկայածավալ տարածքով, թուրքերի կողմից բնիկ ժողովուրդների նվաճման ու բնաջնջման արդյունք էր: **Երկրորդ**, Սևրի պայմանագիրը պատմական, իրավական և մարդկային-բարոյական առումներով արդարացի էր ոչ թուրք ժողովուրդների (հայ, հույն, արաբ, քուրդ) հետագա ճակատագրի համար: Նրա միջոցով թեպետ դեռևս միայն թղթի վրա, այդուհանդերձ, իրավական որոշակի նախապայմաններ էին ստեղծվում հիշյալ ժողովուրդների պետա-քաղաքական նպատակների իրականացման համար:

Մինչ պայմանագրի կնքումը սուլթանական Թուրքիան իրավագուրկ և հարստահարվող ժողովուրդների մի կատարյալ բանտ էր և Առաջին աշխարհամարտում նրա կրած պարտությունը պետք է այդ ժողովուրդների քաղաքական ճակատագրի արմատական բարեփոխման սկիզբը դներ: Սակայն, առնվազն 1918 թ. հոկտեմբերից մինչև 1920 թ. օգոստոսը, Անտանտը ոչ մի իրական քայլ չձեռնարկեց տարագիր հայությանը իր հայրենիք վերադարձնելու համար: Մինչդեռ նման հնարավորություններն առկա էին, քանի որ Կ. Պոլսից մինչև Միջագետք տեղակայված էին հենց Անտանտի զորքերը: Ավելին, Սևրի պայմանագրի նախապատրաստությունն առաջ բերեց միջդաշնակցային հակասությունների առավել սրում, քանզի նախկին Օսմանյան կայսրության բարդ ու խճողված քաղաքական ճակատագրի վճռահատումը ամենից դժվար գործն էր: Եվ բնավ ոչ պատահաբար, Սևրի պայմանագիրը ստորագրվեց Գերմանիայի հետ կնքված Վերսալի հաշտության պայմանագրից միայն 13 ամիս անց:

Տվյալ շրջանում եվրոպական քաղաքականության ամենաբնորոշ հատկանիշը Թուր-

քիայի խնդրում միասնական դիրքորոշման բացակայությունն էր: Այդ հանգամանքի պարզորոշ դրսևորումն էր անգլո-ֆրանսիական մրցակցությունը և դրան ավելացրած՝ արևելյան գործերում այդ երկուսի ընդհանուր հակադրությունը ԱՄՆ-ին: Նման միջպետական հակամարտությունը գործնականում գրեթե բացառում էր Մերձավոր Արևելքում Թուրքիայի դեմ համատեղ հանդես գալու հնարավորությունը:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության նկատմամբ Անտանտի առանցքային երկրների դիվանագիտական քայլերի հետնախորքում ուրվագծվում էին մի կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ ընդհանուր քաղաքականությունը և մյուս կողմից՝ Մերձավոր Արևելքում նրանցից յուրաքանչյուրի ռազմավարական նպատակներն ու շահերը: Իսկ նման գերխնդրի լուծման, ինչպես նաև Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու համար նրանք պատրաստ էին զոհաբերել արևելքում՝ Հայաստանին, իսկ արևմուտքում՝ Հունաստանին:

Հետպատերազմյան շրջանում առկա ուժերի նման դասավորության պայմաններում Սևրի պայմանագրին վիճակված էր դառնալու Անտանտի երկրների ընդհանուր մտադրությունների միասնության և միաժամանակ՝ նրանցից յուրաքանչյուրի նպատակների ու շահերի սկիզբ առած տարանջատման երկակի գործընթացի իրավաքաղաքական դրսևորումը: Առաջին հանգամանքն ապահովում էր այդ փաստաթղթի լեգիտիմությունը, իսկ երկրորդը՝ «դանդաղ գործողության ռումբ» էր դնում տվյալ հանգրվանում նրա իրականացման հնարավորությունների տակ:

Քաղաքական տեսանկյունից ի՞նչ էր խոստանում հայերին Սևրի պայմանագիրը: Նախ, հողված 88-ով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր ազատ և անկախ պետություն, ինչպես դա արել էին Անտանտի երկրները: Ի՞նչ էր սա նշանակում: Դեռ 1918 թ. Բաթումի պայմանագրով՝ տեղի տալով մայիսյան հերոսամարտերին և ժա-

տերությունների միջև հարաբերությունների կարգավորման և ազդեցության գոտիների ձևավորման ու բաժանման հարցերում առկա էր որոշակի առճակատում: Սևրի պայմանագիրը հատկապես թուլացնում էր Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի ունեցած դիրքերը. ամենամեծ ֆինանսա-տնտեսական ներդրումներն էր կատարել Ֆրանսիան Թուրքիայում, ուստի իրական մտավախություն ուներ, որ Թուրքիայի մասնատման դեպքում իր շահերը մեծապես կվնասվեն: Սյուս կողմից, զգալի էր նոր Ռուսաստանի՝ քեմալականներին ցուցաբերած աջակցությունը, քանզի Խորհրդային Ռուսաստանը Սևրը իր համար համարում էր նույն փուլը, ինչ քեմալական Թուրքիան:

Վերջապես, ինքը՝ Հայաստանի Հանրապետությունը, ստեղծված պայմաններում, պատրաստ չէր և դեռևս ռազմա-քաղաքական հնարավորություններ չունեի սեփական ուժերով, միայնակ տեր կանգնելու «վիլսոնյան» Հայաստանին: Դրա ապացույցը Սևրի պայմանագրի կնքումից հետո սկսված թուրք-հայկական պատերազմում նրա կրած պարտությունն էր:

Փաստորեն, Արևմուտքի խոստումները հայ դիվանագիտությանը զրկել էին քաղաքական իրադրության իրատեսական և անաչառ գնահատման, ցանկալին իրականից տարանջատելու հնարավորությունից: Եվ եթե չլինեի Արևմուտքի՝ Սևրի պայմանագրին դավաճանելու քաղաքականությունը ու Խորհրդային աջակցությամբ և արևմտյան թողտվությամբ տեղի ունեցած քեմալական զավթողական արշավանքը, Սևրի պայմանագիրը տվյալ պատմաշրջանում չէր կորցնի իր գործնական ուժը: Քանզի պետք չէ մոռանալ այն կարևոր հանգամանքը, որ Սևրի պայմանագիրը փաստացի կերպով՝ քաղաքականապես և դիվանագիտորեն, Արևմուտքն էր «ստեղծել», և նա էլ շուտով իր ստեղծածը կոնսերվացրեց: Ուստի, Լոզանի Խորհրդաժողովը նույնիսկ Մերձավոր Արևելքում կայուն խաղա-



Ն. Արոնց

ղություն չապահովեց, ինչի վկայությունն է մինչ օրս այդ տարածաշրջանի անկայուն և պայթյունավտանգ իրավիճակը:

Ուրեմն՝ Սևրի պայմանագիրը Արևմուտքի հստակ «մտադրությունների հռչակագիրն» էր՝ հնարավորությունների բացակայության պայմաններում: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական առումով նա Հայաստանի ու հայության համար պահպանում է իր իմաստը այնքան ժամանակ, քանի դեռ չի իրականացվել պայմանագրի իրավատիրոջ «ռոտացիան» (փոխարինումը) նույն Արևմուտքի կողմից: Անկախ Հայաստանի Հանրապետության առկայությունը ներկայումս ստեղծում է նման վտանգավոր գործընթացը կասեցնելու, բայց ո՛չ արագացնելու հնարավորություն, որովհետև ժողովուրդների ազատ ինքնորոշման վիլսոն-

յան սկզբունքը ներկայումս բախվում է Սևրի պայմանագրով նախատեսվող տարածքներում նրանց պատմական ու փաստացի տեղաբաշխման անհամապատասխանության իրողությանը: Պատահական չէ, որ վերջին շրջանում Արևմուտքում տպագրված մի շարք քարտեզներում նկատվում է Սևրի պայմանագրով նախատեսվող Հայաստանի (Արևմտյան Հայաստանի) և Քուրդիստանի միաձուլման միտումը՝ վերջինիս անվան տակ: Նման իրողության պատճառներից մեկն էլ Արևմտյան Հայաստանի իրավատերը լինելու հարցում Հայաստանի Հանրապետության հնարավորությունների դիվանագիտական սահմանափակությունը հայկական Սփյուռքի քաղաքական կոնսուլիդացմամբ հակակշռելու անկարողությունն է: Սևրի պայմանագրով Հայաստանին անցնող տարածքներում Քուրդիստանի ձևավորման «ուրվականը» հիմնվում է ռեալ ժողովրդագրական իրավիճակի հաշվառման վրա, ինչին չի հակադրվում Հայաստանի Հանրապետությունից զատ գոյություն ունեցող և նրա տարածքներում ինքնորոշվելու հնարավորություն չունեցող հայկական Սփյուռքի՝ որպես ցեղասպանության փաստով ձևավորված հարկադիր վտարանդիության, ռեալ ժողովրդագրական իրավիճակը: Մինչդեռ, 21-րդ դարում գեոպոլիտիկային (աշխարհաքաղաքականությանը) փոխարինելու է գալիս դեմոպոլիտիկան (ժողովրդագրական քաղաքականությունը), որի կարևորության մեծացմանը զուգընթաց ակնհայտ է դառնում Սևրի պայմանագրով Հայաստանին պատկանող տարածքների իրավատիրոջ «ռոտացիայի» վտանգի մեծացումը:

Այսպիսով, Սևրի պայմանագիրն արտացոլում է Թուրքիայի ազգային պետությունների բաժանման գործընթացի անավարտության փաստը: Այն միաժամանակ հանդիսանում է նման փաստի դե-յուրե ճանաչումը կատարված իրողության վերածելու Արևմուտքի ցանկու-

թյան անժամանցելիության վկայությունը: Իսկ դա ապացուցում է, որ Սևրի պայմանագիրը պահպանում է իր քաղաքական հին իմաստը նոր ժողովրդագրական իրողությունների պայմաններում ևս: Սակայն, վերջիններիս համատեքստում հայկական գործոնը նկատելիորեն թուլացել է, ուստի ներկա հանգրվանում ողջ խնդիրը նրա ամրապնդման նոր հնարավորությունների փնտրտուքի մեջ է:

2. Սևրի պայմանագրի իրավական իմաստը

Պետությունների միջև փոխհարաբերությունների կարգավորման առումով իրավական միջոցներ են համարվում միջազգային պայմանագրերը, որոնք նպատակ ունեն հարթել միջպետական հակասությունները: Այդպիսին էր Սևրի պայմանագիրը, որը պետք է կարգավորեր Առաջին աշխարհամարտից հետո առկա հիմնախնդիրների համակարգը:

Սևրի պայմանագրի ստորագրումից առաջ էլ Արևմտահայաստանի նկատմամբ հայոց ունեցած իրավունքները հիմնվում էին պատմական, բնական և լեզվա-մշակութային անժխտելի փաստարկների վրա: Եվ այդ առումով Սևրի պայմանագրի մասին խոսելուց առաջ տեղին է անել մեկ կարևոր վերապահություն: Պետք է միշտ նկատի ունենանք, որ Սևրի պայմանագրով չէ, որ հարկ է ապացուցել հայոց անբալտելի իրավունքների անբեկանելիությունը: Սակայն, մյուս կողմից, Սևրի պայմանագրի իրավական կարգավիճակի մանրամասների վերհանումը և նրա ուժի մեջ լինելու հանգամանքի ներկայացումը՝ հիշյալ ուղղությամբ կարող է ծառայել իբրև լրացուցիչ փաստարկ:

Հայկական լեռնաշխարհը, որի մեծագույն մասը կազմում է Արևմտահայաստանը, հայերի բնօրրանն է, ուր նրանք ապրել, ապրում են և արարում: Եվ այդ առումով, արդեն իսկ, նրանք

այդ հողերի նկատմամբ ունեն պատմական տիրոջ կարևորագույն, առաջնային ու բացառիկ իրավունք: Ինչ խոսք, այս պարագան գուցե ոմանց զուտ բարոյա-հոգեբանական ինքնասփոփում կարող է թվալ, սակայն մենք նպատակ չունենք այն ներկայացնել վերացական ձևով, այլ ընդհակառակը՝ խորապես համոզված ենք, որ այդ բացառիկ իրավունքին հասնելու ճանապարհը անցնում է հավաքական պարտավորություններով գիտակցված՝ իրատես քաղաքականությամբ:

Պատմականից զատ հայ ժողովուրդն ունի ազատ ինքնորոշման իրավունք, որն անգամ ներկայիս անկախ Հայաստանի Հանրապետության պայմաններում ամենևին չի կորցրել իր արդիականությունը ու բնականաբար պետք է տարածվի նաև Արևմտահայաստանի վրա, քանզի առանց հողի՝ ինքնորոշում չի լինում: Ի դեպ, տեղին է հիշատակել, որ ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովը 1972 թ. դեկտեմբերի 25-ին հատուկ բանաձևով հաստատել է բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այն փաստորեն դարձել է միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր (jus cogens) սկզբունք: Նման կարևորագույն հարցում հայերի համար հրամայական է դառնում ինքնորոշման իրավունքին սեփականատեր լինելը՝ թե՛ նախաձեռնության և թե՛ իրականացման առումներով, ապա թե ոչ՝ նորից կկրկնվեն լենինյան կամ վիլսոնյան թղթային որոշումները: Ինչ վերաբերում է թուրքական կողմին, որը վարչա-պետական առումով «տիրացել է» Արևմտյան Հայաստանի հողերին, ապա այն կատարվել է բացառապես բռնի միջոցներով՝ պետական մեքենայի կողմից կազմակերպված Հայոց եղեռնով:

Սևրի պայմանագրի իրավական վերլուծության հարցում, որպես հիմնական սկզբունքներ ամփոփող ակտ, նկատի ունենք «Միջազգային պայմանագրերի իրավունքի

մասին» 1969 թ. մայիսի 23-ին կնքված Վիեննայի համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 1980 թ. հունվարի 27-ին և կիրառվում է պետությունների միջև կնքված պայմանագրերի նկատմամբ⁵: Այն վավերացրել են Թուրքիան՝ 1971 թ., իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ 1996 թ. հոկտ. 23-ին:


Հայտնի է Սևրից Լոզան ընկած ճանապարհին արձանագրված հայկական հարցի իրավական կարգավիճակի որոշակի նահանջը, որը լի է էական իրավախախտումներով:

Միջազգային պայմանագրերի տեսության մեջ գոյություն ունի *pacta sunt servanda* սկզբունքը, որը բառացի նշանակում է՝ «պայմանագրերը պետք է կատարվեն»: Այս սկզբունքը գրեթե պարտադիր բնույթ է կրում, նրանից հրաժարվելը միջազգային իրավունքի *delict* (խախտում) է համարվում, իսկ խախտման և դրա հետևանքների պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է խախտում կատարած պետության վրա: Վիեննայի համաձայնագրի 18-րդ հոդվածում նշվում է, որ «պետությունը պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք պայմանագիրը զրկում են իր առարկայից և նպատակից»: Իսկ արդեն 26-րդ հոդվածը շեշտում է, որ «յուրաքանչյուր պայմանագիր պարտադիր է նրա մասնակիցների համար և նրանց կողմից պետք է բարեխղճորեն կատարվի»:

Միջազգային պայմանագրի վավերականության նախապայմանն այն է, որ նա պետք է կնքված լինի պատշաճ կերպով՝ պահպանելով միջազգային իրավունքի անհրաժեշտ սկզբունքները: Սա, փաստորեն, թեպետ տեխնիկական, բայց խիստ կարևոր պահ է: Սևրի պայմանագրում այս հանգամանքը պատշաճ մակարդակի վրա էր:

Իսկ բոլոր ձևական կողմերի ապահովու-

5. Տե՛ս «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիան, Երևան, 1997:



մից հետո տեղի է ունենում պայմանագրի վավերացումը: Մինչդեռ, Սևրի պայմանագրի վավերացում չեղավ: Այս պարագայում, անշուշտ, մեղավոր է Արևմուտքը, որը Թուրքիայի հարցում սեփական խնդիրները կարգավորելով, փաստորեն, անտարբերության մատնեց իր իսկ ստանձնած պարտավորությունները: Սակայն, սեփական պարտավորությունների հանդեպ այս կամ այն վերաբերմունքը հարցի քաղաքական կողմն է, որը որևէ կապ չունի Սևրի պայմանագրի՝ իրավական առումով անխոցելի լինելու փաստի հետ:

Այժմ քննենք Սևրի պայմանագրի իրավական կարգավիճակի հստակեցման հավանական ուղիները: Տեսականորեն և գործնական առումներով ցանկացած պայմանագիր կարող է անվավեր ճանաչվել հետևյալ պարագաներում.

1. Պայմանագրում առկա է իրավական սխալ, որը էական հիմք է եղել այն կնքելու և պարտավորությունների ընդունման ժամանակ: Այս կետն ընդունվում է վերապահությամբ, եթե նշված պետությունն իր գործողությամբ նպաստել է այդ սխալի առաջացմանը (Վիեննայի համաձայնագիր, հոդված 48): Եվ եթե Սևրի պայմանագրով Թուրքիայի նոր կարգավիճակի անրագրումը «սխալ» համարենք, ապա միանշանակորեն պետք է ընդունենք նրա նախընթաց շրջանի նվաճողական գործողության արդյունքները:

2. Պայմանագիրը տվյալ պետությունը կնքել է բանակցություններին մասնակից մեկ այլ պետության խաբեբայական գործողությունների ազդեցության ներքո (հոդված 49): Այս առումով դիվանագիտական հնարքները գործադրվել են ոչ թե Թուրքիայի նկատմամբ, այլ նրա կողմից:

3. Պետության համաձայնությունը ձեռք է բերվել մյուս բանակցողի կողմից ուղղակի կամ անուղղակի կաշառվելու միջոցով (հոդված 50): Սևրի պայմանագրի կնքման ժամանակ գործը

դիվանագիտական խոստումներից այն կողմ չի ծավալվել:

4. Պետության համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցիչներին գործով կամ սպառնալիքով հարկադրելու արդյունքում (հոդված 51): Առաջին աշխարհամարտում հաղթողի իրավունքը, այն էլ նախահարձակ Թուրքիայի հանդեպ, բնավ էլ պետք չէ նույնացնել սպառնալիքով հարկադրանքի ձևերին:

5. Կնքված է ուժի կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով: Այս առումով այն պետությունը, որին պարտադրել են նման պայմանագիր, կարող է հրաժարվել դրանից (հոդված 52): Եթե հարցին այս կերպ մոտենանք, ապա բոլոր պատերազմներից հետո կնքված բոլոր պայմանագրերը կարող են անվավեր ճանաչվել, քանզի դրանք ինչ-որ չափով արդյունք են որոշակի ուժի կիրառման: Միանգամայն տեղին է նշել, որ այդ նույն Թուրքիան, դեռ օսմանյան շրջանից սկսած, իր տարածքը արհեստականորեն մեծացրել էր բացառապես ապօրինի միջոցներով, որպես կանոն՝ պարտված երկրներին ստիպելով պարտադրանքի ներքո համապատասխան պայմանագրեր կնքել:

Վերջապես, իրավաբանորեն միջազգային պայմանագիրը դադարում է գործելուց, երբ առկա են հետևյալ հանգամանքները.

1. Պայմանագրի դրույթներին համապատասխան (հոդված 54): Սևրի պայմանագրում նման դրույթ բացակայում է:

2. Բոլոր մասնակիցների համաձայնությամբ ցանկացած ժամանակ՝ պայմանավորվող մյուս պետությունների հետ խորհրդակցելուց հետո (հոդված 56): Հայաստանի Հանրապետությունը Լոզանի պայմանագրի կնքմանն իր համաձայնությունը չի տվել, և նրա հետ չեն խորհրդակցել:

3. Պայմանագրի դրույթները կարող են դադարեցվել բոլոր մասնակիցների կամ առանձին մասնակցի նկատմամբ, եթե՝ ա. պայմանա-

գրի դրույթներին համապատասխանում է, ք. ցանկացած ժամանակ բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ պայմանավորվող այլ պետությունների հետ խորհրդակցելուց հետո (հոդված 57): Սևրի պայմանագրում ո՛չ Հայաստանի Հանրապետության, ո՛չ էլ այլ ստորագիր պետությունների նկատմամբ նման վերապահում արված չէր:

4. Պայմանագիրը համարվում է դադարեցված, եթե նրա բոլոր մասնակիցները նույն հարցով կնքում են հաջորդող պայմանագիր (հոդված 59): Սևրի և Լոզանի պայմանագրերում պարունակվող հարցերը ամենևին էլ նույնական չէին: Իսկ Հայաստանի Հանրապետությունը որպես Սևրի պայմանագիրն ստորագրող երկիր՝ նրան հաջորդող Լոզանի պայմանագրի ստորագրմանը չի մասնակցել:

5. Մասնակիցն իրավունք չունի պայմանագրի կատարման անհնարինությունը որպես հիմք պատճառաբանել՝ նրանից դուրս գալու կամ նրա գործունեության կասեցման համար, եթե անհնարինությունը մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման արդյունք է (հոդված 61): Իսկ Թուրքիան, փաստորեն, խախտել է Սևրի իր պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները:

6. Պայմանագիրը դադարեցնելու կամ նրանից դուրս գալու համար հանգամանքների հիմնովին փոփոխությունը չի կարելի պատճառաբանել որպես որոշիչ հիմք (հոդված 62): Այս հոդվածը Թուրքիայից զատ և առավելապես վերաբերում է նաև Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային: Ի դեպ, նրանց կողմից Թուրքիայի հետ 1921 թ. կնքված պայմանագրերը ևս կոպտորեն խախտում են մինչ այդ իրենց իսկ ստանձնած միջազգային պարտավորությունները:

7. Պայմանագրի մասնակիցների միջև դիվանագիտական հարաբերությունների խզումը

չի ազդում նրանց միջև հաստատված իրավահարաբերությունների վրա (հոդված 63): Այս պարագան ուժը պահպանում է նաև այժմ, նույնիսկ այն դեպքում, երբ Հայաստանի և Թուրքիայի միջև փաստացի դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատված:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի՝ համընդհանուր պարտադիր օրենք լինելու առումով հոդված 64-ը, համաձայն որի ցանկացած պայմանագիր անվավեր է և դադարում է, եթե հակասում է որևէ նմանատիպ օրենքի, Սևրի պայմանագրի համար կիրառելի չէ, քանզի այն ոչ-թուրք ժողովուրդների հանդեպ հիշյալ օրենքի յուրահատուկ մարմնացումն է:

Մյուս կողմից, միջազգային պայմանագրերը դադարում են գործելուց, երբ.

1. Լրանում է պայմանագրի ժամկետը: Սևրի պայմանագրում ժամկետի լրացման մասին նման որևէ պայմանավորվածություն չկա:

2. Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները կատարվել են: Այս կետը Հայաստանի Հանրապետության իրավունքների առումով ընդհանրապես չի համապատասխանում Սևրի պայմանագրի տառին ու ոգուն:

3. Պայմանագիրը ուժից դուրս կամ առ ոչինչ է հայտարարվել: Մասնակիցներից ոչ մեկը իրավաբանորեն չեղյալ չի հայտարարել Սևրի պայմանագիրը: Որպես կանոն, պայմանագիրը կարող է վերանայվել ոչ այլ կերպ, քան բոլոր մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ:

Այս սկզբունքը հռչակվել է դեռ 1871 թ. Լոնդոնի խորհրդաժողովում: Վիեննայի համաձայնագրի 39-րդ հոդվածն այդ առումով շատ հստակ է. «Պայմանագիրը կարող է փոփոխվել մասնակիցների համաձայնությամբ»: Իրավական առումով սա համարվում է պայմանագրի վերանայման միակ հնարավոր տարրերակը: Հայաստանի Հանրապետությունը Սևրի պայմանագրի փոփոխման շուրջ համաձայնություն չի տվել: Ի վերջո, հենց Սևրի

պայմանագրում որևէ փոփոխության հնարավորությունն նախատեսված չէր: Ավելին, համաձայնագրի 40-րդ հոդվածում նշվում է, որ պայմանագրի մեջ ուղղումներ մտցնելու առաջարկի և համաձայնության առնչությամբ տարվող բանակցություններին պետք է մասնակցեն նրա բոլոր պայմանավորվող պետությունները: Իսկ Հայաստանի Հանրապետությունը, իրենից անկախ պատճառներով, չի մասնակցել Լոզանի խորհրդածրոյակին, դեռ ավելին՝ այնտեղ ներկայացնել քեմալական Թուրքիան և Սևրի պայմանագիրը չստորագրած ԱՄՆ-ը:

Այժմ անդրադառնանք Սևրի պայմանագրի չվավերացված լինելու՝ այդքան չարչրկված հարցին: Ի դեպ, հիշատակենք, որ պայմանագրի եզրափակիչ մասում միանշանակ կերպով շեշտվում էր. «Այս պայմանագիրը (իմա՝ Սևրի - Ա. Հ.) պետք է վավերացվի»:

Նախ, պայմանագրի չվավերացվելն այն ստորագրողին չի ազատում ստանձնած օրինական պարտավորությունների կատարումից: Լռելյայն վավերացում է տեղի ունենում, երբ վավերացումից առաջ, մասամբ կամ ամբողջությամբ, գործադրվում է պայմանագիր պետության կամ պետությունների կողմից ու նրանց արտոնությամբ: Սևրի պայմանագիրը մասամբ գործադրվեց, օրինակ՝ արաբական հողերի անջատմամբ, ճիշտ է՝ մանդատի տեսքով: Վիեննայի համաձայնագրի 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «պայմանագիրը չեղյալ հայտարարելու, նրանից դուրս գալու կամ նրա գործունեությունը կասեցնելու մասնակցի իրավունքը կարող է օգտագործվել միայն ամբողջ պայմանագրի վերաբերյալ»:

Միջազգային իրավունքում բարի կամեցողության սկզբունքը պահանջում է խուսափել այն քայլից, որը հիմնավորապես նպատակ ունի իմաստազրկել ստանձնած հանձնառությունը: Վերջապես, միջազգային իրավունքում պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելը

նշանակում է առ ոչինչ հայտարարել, որը, որպես կանոն, անթույլատրելի է և համարվում է անհրավազոր քայլ, *pacta sunt servanda* սկզբունքի խախտում: Պայմանագիրը կարող է առ ոչինչ հայտարարվել նաև այն ժամանակ, երբ նրա մյուս մասնակից պետությունը դադարում է գոյություն ունենալ: Իսկ որ հայկական պետականությունը չի դադարել գոյություն ունենալուց, ապացուցվում է ներկա անկախ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչման փաստով:

Կապված 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի հետ՝ հարկ է կատարել հետևյալ եզրակացությունները: Սևրի պայմանագիրը փոխարինված չէ Լոզանի պայմանագրով, քանզի.

1. Լոզանի պայմանագրում (6-րդ բաժին՝ «Պայմանագրեր») ոչ մի հիշատակություն չկա ոչ միայն Սևրի պայմանագրի, այլև՝ Հայաստանի Հանրապետության մասին:

2. Ըստ միջազգային իրավունքի՝ ցանկացած պայմանագրի ստորագիր կողմ իրավունք ունի մասնակցել նրա փոփոխության շուրջ տարվող բանակցություններին: Հայաստանի Հանրապետությունը նման իրավունքից չի օգտվել: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության բացակայությունն իրավամբ կարող է պատճառ լինել, որ Լոզանի պայմանագիրն առնվազն անվավեր լինի այն չափով, ինչ չափով վերաբերում է հայկական իրավունքների ոտնահարմանը: Ի վերջո, Լոզանի պայմանագիրն ամբողջությամբ անտեսեց Սևրի պայմանագրով հայերին խոստացված իրավունքները:

Սևրի պայմանագրի իրավական կարգավիճակի առումով տեղին է շեշտել, որ Թուրքիան իրավազոր չէ իր նպատակներին ծառայեցնել Լոզանի պայմանագիրը՝ արևմտահայ հողերի հանդեպ հայկական պահանջները խափանելու համար, թեկուզ այն պատճառով, որ նրա կնքումը հակասում է պարտադիր իրավա-

կան սկզբունք դարձած ժողովուրդների ինքնորոշման իրավունքին:

Այսպիսով, Սևրի պայմանագիրը միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն այժմ էլ ամենևին չի կորցրել իր իրավական ուժը, և միջազգային հարաբերությունների համապատասխան բարենպաստ ընթացքի դեպքում կարող է կրկին բանակցությունների սեղանին դրվել և հայոց համար ծառայել որպես իրավական փաստաթուղթ:

3. Սևրի պայմանագրի տնտեսա-աշխարհագրական իմաստը

Մինչ օրս Սևրի պայմանագիրը մեզ հետաքրքրել է հողային տարածքների հատկացման առումով: Այնինչ նրանում առկա են նաև ֆինանսա-տնտեսական բնույթի մի շարք դրույթներ, որոնք ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնացել:

Ըստ հոդված 89-ի, Թուրքիան և Անտանտը, ինչպես նաև Հայաստանը, համաձայնվում էին Էրզրումի (Կարին), Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի (Բաղեշ) նահանգներում հայ-թուրքական սահմանագծի որոշումը թողնել ԱՄՆ-ի նախագահի որոշմանը: Իսկ այդ դեպքում հոդված 90-ով Թուրքիան նախապես հայտարարում էր, որ կանխավ հրաժարվում է հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից:

Հայաստանի ինքնիշխանությանը հանձնվող տարածքների առթիվ նրա վրա դրվում էին որոշակի ֆինանսական պարտավորություններ՝ կապված Թուրքիայի հանրային պարտքի հետ: Իսկ արդեն ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարարական վճռից հետո, տեղում սահմանը որոշելու համար, ըստ հոդված 91-ի, երեք ամսվա ընթացքում պետք է ստեղծվեր սահմանագծման հանձնաժողով: Ընդ որում, այդտեղ Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին ոչ մի հիշատակություն, ինչքան էլ զարմանալի թվա,

չկար: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ սահմանին, ապա այն պետք է որոշվեր նրանց ընդհանուր համաձայնությամբ, որի անհնարինության դեպքում հիշյալ խնդիրը փոխանցվելու էր արևմտյան տերությունների իրավասությանը:

Առանձնակի նշանակություն ուներ ծովային ելքի խնդիրը: Հոդված 351-ով Բաթումի նավահանգստով դեպի Սև ծով ազատ մուտքի իրավունք, այլ երկրների թվում, տրվում էր նաև Հայաստանի Հանրապետությանը: Իսկ արդեն հոդված 352-ով Հայաստանի Հանրապետությունը նման իրավունքից օգտվելու էր նաև Տրապիզոնի նավահանգստում: Ավելին, նրան առհավետ վարձակալության էր հանձնվում մի տեղամաս՝ ազատ տնտեսական գոտու կարգավիճակով:

Սակայն, Սևրի պայմանագրով ի չիք էր դառնում իր պատմական սահմաններում (Մեծ Հայք) Հայաստանը վերականգնելու հայ ժողովրդի քաղաքական իդեալը: Փաստորեն, «թուրքական» համարվեցին Խարբերդի ու Տիգրանակերտի (Դիարբեքի) նահանգները: Իսկ արդեն Կիլիկիայի մասին խոսք անգամ չկար: Այսպիսով, հայերին թողեցին միայն Վանի, Բաղեշի ու Կարինի նահանգները, այն էլ՝ ոչ լրիվ:

Ընդունված տեսակետ է, որ Հայաստանի սահմանները որոշվեցին Սևրում, ուստի սովորաբար դրանք հիշատակվում են որպես «Սևրյան»: Սակայն, բուն պայմանագրով նման սահմանագծում հստակ ձևով չկատարվեց: Այս առումով, եթե Եվրոպան հենց տվյալ պայմանագրում ճշգրտված կերպով նշեց, ընդ որում՝ բավականին մանրամասն, Հունաստանի և Զմյուռնիայի սահմանները, իսկ արաբների համար հարցը թողնվեց տեղում՝ հանձնաժողովներին որոշելու համար, ապա Հայաստանի պարագայում նման հստակություն չկար: Հարցը պարզապես հանձնվեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի հայեցողությանն ու տնօրինմանը, ինչը զգալիորեն թուլացրեց Հայաստա-

նի անկախության ճանաչման նշանակությունը: Փաստորեն, այդ հարցում Եվրոպան վճռակա-
նություն չդրսևորեց: Նա լավ հասկացավ, որ
«քեմալական հարցի» լուծումն իր համար զգա-
լի ռազմական և տնտեսական ծախսերի հետ է
կապված, իսկ հանուն հայերի՝ նման զոհողու-
թյան գնալու ցանկություն չկար: Դրանից զատ,
անորոշ էր մնում նաև գոյություն ունեցող Հա-
յաստանի Հանրապետության արևելյան սահ-
մանների ճակատագիրը: Մինչդեռ, 1918 թվա-
կանից սկսած, քաղաքական դեպքերն արդեն
ապացուցել էին, որ տարածքային առումով
որևէ փոխընթերցում Հայաստանի, Վրաստանի և
Ադրբեջանի միջև անհնարին է: Ուստի, Ն. Ադոն-
ցի բնորոշմամբ, «Սոսկ այն փաստը, որ Հայաս-
տանի սահմանների կարևորագույն հարցը
գործնականում բաց է մնում, նշանակալիորեն
նվազեցնում է այս ակտի գործած տպավորու-
թյունը, որն այլապես, անկասկած խիստ մեծ
նշանակություն ունի»⁶:

Այսպիսով, Սևրի պայմանագիրը հայերին
տվեց ամեն ինչ, բացի նրանց սահմանների որո-
շումից: Իսկ որ հայերի համար սեփական երկրի
սահմանների որոշման խնդիրն ուներ ռազմավա-
րական նշանակություն՝ կասկածից վեր է: Եվ հե-
տաձգելով նման խնդրի որոշումը, տերություն-
ներն իրականում բարձիթողի ու անորոշ վիճակ
էին ստեղծում: Դրա պատճառն Արևմուտքի
չցանկանալու ու որոշ առումով նաև՝ սեփական
միջոցներով Հայաստանի սահմանների ան-
ձեռնմխելիությունը որոշելու և ապահովելու ան-
կարողությունն էր:

Վերջապես, փոքր, աղքատ, ավերակ դար-
ձած (ի դեպ՝ ոչ առանց իրենց թողտվության) Հա-
յաստանից նրանք խոշոր հաշվով օգուտ չունեին:
Այնտեղից նավթ չէին արտահանելու և պետք է
վաղ թե ուշ բախվեին Այսրկովկասում կորցրած
դիրքերը վերանվաճելու՝ նոր Ռուսաստանի
ձգտմանը: Այդ պատճառով էլ Եվրոպան իր ան-
ճարակությունը քողարկելու համար հարցի լու-

ծումը բարդեց Վ. Վիլսոնի՝ արդեն զգալիորեն
«երերող» ուսերին՝ հասկանալով, որ նա էլ ի զո-
րու չէ ապահովել ապագա Հայաստանի ամբող-
ջականությունը:

Ինչևէ, Վ. Վիլսոնից մի քարտեզ գծել էր
պահանջվում, որն էլ նա կատարեց... յոթ ամսվա
ընթացքում՝ միայն 1920 թ. նոյեմբերի 22-ին
հռչակելով իրավարարական վճիռը, որի արդ-
յունքում նա ընդամենը՝ «հարստացրեց» տարա-
ծաշրջանի քաղաքական աշխարհագրությունը⁷:
Ինչ խոսք, ԱՄՆ-ի Սենատի կողմից Հայաստանի
մանդատի մերժումից հետո, սա նույնպես վատ
ցուցանիշ չէր: Փաստորեն, սա Վ. Վիլսոնի կարա-
պի երգն էր, և նրան ենք պարտական գոնե թղթի
վրա մեզ Հայաստան «շնորհելու» համար:

Հայերին ի՞նչ հողեր էին հասնում Վ. Վիլսո-
նի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարարական
վճռով: Արևմտահայաստանը պետք է ունենար
90.000 քառ. կմ տարածք: Սա աշխարհագրա-
կան առումով ընդգրկում էր Վանա լիճը, Արածա-
նիի և Արևմտյան Եփրատի վերին ու միջին հո-
վիտները, ճորոխի հովիտները: Այս տարածքին
ավելացրած՝ Արևելահայաստանի 71.330 քառ.
կմ, արդյունքում կստացվի՝ 161.370 քառ. կմ:

Հիշյալ տարածքները Առաջին աշխարհա-
մարտի գլխավոր թատերաբեմերից էին, որի
արդյունքում դրանց տնտեսական ենթակառուց-
վածքները զգալիորեն ավերվել էին: Ընդ որում,
զուտ տնտեսական առումով առավել կարևոր էր
Սև ծովին հարող հատվածը: Ավելորդ չէ նշել ևս
մի հանգամանք: Դեռևս Սայքս-Պիկոյի համա-
ձայնագրով, Կարինի, Վանի, Բաղեշի նահանգնե-
րը պետք է հանձնվեին Ռուսաստանին: Այդ առու-

6. Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, էջ 16:
7. Վճիռը տես The Papers Relating to Foreign Relations of United States, 1920, volume 3, Washington, 1936, pp. 790-804.
Վաշինգտոնում այն պաշտոնապես հրապարակվել է միայն 1921 թ. հունվարի 2-ին:

մով, ինչպես Եվրոպայի ընտրությունը, այնպես էլ Վ. Վիլսոնի սահմանագծումը, պատահական չէր: Նրանք լավ էին հասկանում, որ ռուսները պետք է ձգտեն տիրանալ նախկինում իրենց «հասանելիքին», իսկ այդ դեպքում՝ խորհրդա-քենալական ընդհարումը անխուսափելի կլիներ:

Վ. Վիլսոնի որոշման բարդությունը նրանում էր, որ այն դեռ պետք է իրականացվեր... Փաստորեն, նա հայերին տարածք «շնորհելով» ոչինչ չասաց դրանց տեր դառնալու, այն իրականություն դարձնելու մասին: Ավելին, ԱՄՆ-ը ոչ մի որոշակի քայլ չձեռնարկեց: Նրա խնդիրը միայն քարտեզ գծելն էր:

Այժմ մի քանի խոսք Սևրի պայմանագրի գուտ տնտեսական հողվածների մասին: Հողված 240-ով Թուրքիայից տարածք ստացած պետություններն անհատույց ձեռք էին բերում դրանց վրա գտնվող ցանկացած գույք: Սա Հայաստանի պարագայում իրական չէր, քանզի Արևմտահայաստանում ոչինչ չէր մնացել: Հողված 241-242-ով անջատված տարածքներին տիրացած երկրները ստանձնում էին թուրքական պարտքի համապատասխան բաժինը: Այս դրույթը ոչ միայն բարոյապես, այլև իրավապես անհարիր էր՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի հանդեպ:

Եզրակացնելով նշենք, որ եթե 1919 թ. ամբողջական Հայաստանի տարածքը ըստ Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հայկական հուշագրի պետք է կազմեր 330 հազար քառ. կմ, ապա ակնհայտ է դառնում, որ հետագա նահանջը խիստ նկատելի է: Իսկ եթե Սևրի պայմանագրի համաձայն Թուրքիայի տարածքը պետք է կազմեր 440 հազար քառ. կմ, ապա ներկայումս այն 725 հազար քառ. կմ-ից ավելի է:

4. Սևրի պայմանագրի արդիականությունը

Հայկական հարցի համար դառը փորձություն էր Փարիզի խաղաղության վեհաժողովը:

Թվում էր, թե տրամաբանությանը և ողջախոությանը համապատասխան, հայկական պահանջներն այստեղ պետք է արժանի ընկալում և հաստատում գտնեին: Սևրի պայմանագրի նկատմամբ հայ հասարակական-քաղաքական շրջանակները մեծ հույսեր ունեին և լավատեսությամբ էին լցված: Նրանք իրավամբ համոզված էին, որ Առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի կրած անլուր զրկանքները և ունեցած ծառայությունները Անտանտը ըստ արժանվույն կգնահատի և ի վերջո Թուրքիան կպատժվի: Քանի որ Սևրի պայմանագիրը նախատեսում էր անկախ և ազատ Հայաստանի ստեղծում: Կարծես թե իրականություն էին դառնում տասնամյակներ շարունակ հայ ազգային ազատագրական պայքարի հետապնդած նպատակները: Սակայն, Անտանտի երկրների ղեկավարները հազիվ էին կնքել Սևրի պայմանագիրը, երբ անմիջապես սկսեցին բարձրացնել դրա վերանայման հարցը:

Սևրի պայմանագրի դասերից մեկն էլ այն է, որ այսօր մեր առջև դրված խնդիրները պահանջում են համապարփակ ու հավասարակշռված մոտեցումներ ու լուծումներ: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ռազմավարություն, որպեսզի ի գործու լինենք պատրաստվել և կարողունակ լինել աշխարհաքաղաքական ցանկացած իրադրության: Պետք չէ մոռանալ, որ թեև սառը պատերազմը «ավարտվել է», սակայն ցեղասպան Թուրքիան շարունակում է մնալ մեր գլխավոր իրական հակառակորդը, ընդ որում հենց Սևրի պայմանագրի առումով: Իսկ որ թուրքերը, թեկուզեև արտաքուստ ցույց չտալով, «վառ» են պահում իրենց համար վտանգներով լի Սևրի պայմանագրի «հիշատակը»՝ հեռու գնալու հարկ չկա: Մասնավորապես, Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելը դեռևս 1995 թ. և 1998 թ. արձանագրելով այս պայմանագրի վերականգնման ուղղությամբ արևմտյան որոշ կառույցների ձգտում-

ները, շեշտեց, որ այդ «ջանքերը ապարդյուն են, քանզի եթե ողջ աշխարհն էլ միավորվի, իրենք կդիմադրեն»⁸:

Ներկայումս նույնպես առիթից առիթ արտահայտվող թուրք պետական գործիչների անհանգստությունը ցույց է տալիս, որ Սևրի պայմանագիրն ամենևին էլ մոռացված վավերագիր չէ, քանզի թուրքերը լավ են հասկանում, որ վաղ թե ուշ այն կրկին միջազգային-քաղաքական թատերաբեմ դուրս գալու հավանականություն ունի: Այս առումով, հարկ է միշտ պատրաստ լինել, քանզի հակառակ դեպքում չի բացառվում 1920 թ. թուրք-հայկական աղետալի պատերազմի կրկնությունը:

Ինչ խոսք, թեպետ Սևրի պայմանագրում առկա էին արևմտյան դիվանագիտության և հայկական պահանջների որոշակի աղերսներ, սակայն Եվրոպայի վճռականությունը մինչև վերջ «չբավականացրեց»: Սևրի պայմանագիրը նրա կողմից դիտարկվեց որպես սոսկ ժամանակի քաղաքական անհրաժեշտության արդյունք, որը մեծ չափով կարող էր հաջողությամբ փոփոխվել, եթե այդպես պահանջեր նրա շահը:

Սյուս կողմից, բոլորովին բացառել արևմտյան գործոնի դերը և անվերապահորեն հույսը կապել Ռուսաստանի հետ՝ մեկ այլ ծայրահեղություն է: Մինչ այժմ հայ քաղաքական միտքը զբաղվել է քաղաքական կողմնորոշումներով (արևելումներով) և անընդհատ «կարևորության» նժարին է դրել այս կամ այն տերությանը նախապատվություն տալը:

Չենց նման հովանավորների փնտրտուքն էլ մեզ ժամանակին զրկեց Սևրի պայմանագրի իրականացմանը պատրաստ լինելու կարողությունից: Այդ առումով, հարկ է գերազանցապես ապավինել սեփական ուժերին, քանզի ոչ ոք մեր փոխարեն մեզ համար Սևրի պայմանագրին կյանք չի տա: Մեր միակ կողմնորոշումը պետք է լինի հայկականը, քանզի վճռականորեն գործող մենակի համար միշտ էլ իրական դաշնակիցներ կգտնվեն:

Սևրի պայմանագրի պահանջների արդարացիությունը կասկած չի հարուցում: Սակայն, նման իրավունքները հարկ է ապացուցել ինքնապաշտպանության պատրաստակամությամբ, պայքարով: Մեր ձավորարևելյան տարածաշրջանում և նրա շուրջ առկա դրությունը հոգուտ հայերի մենք պետք է փոփոխենք: Այս առումով, տեղին է մեջբերել Գ. Նժդեհի հստակ ձևակերպումը. «Պայմանագրերն ապրում են այնքան ժամանակ, որքան ապրում են նրանց ծնունդ տվող պայմանները: Պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը և հարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից, սակայն հենց որ մի այլ դրություն, հենց որ մի ուրիշի թղթե բարեկամությունը իրենց ավելի շահավետ թվաց, նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին և սպառնում աշխարհի խաղաղությանը»⁹:

8. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1995, մայիսի 3, ք. 103; 1998, հունիսի 5, ք. 109:

9. Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, էջ 116:

Սոցիալական յեղափոխուժին

Կարեն Խանլարեան

«Մենք չենք ստեղծել յեղափոխուժինը, յեղափոխուժինն է ստեղծել մեզ...»

Կարլ Գեորգ Բուչներ
(գերմանացի դրամատուրգ)

Յեղափոխուժինն առհասարակ նշանակում է կացութեան հիմնարար փոփոխութիւն՝ համեմատաբար կարճ ժամանակահատուածում: Յեղափոխութիւն երեւոյթը մարդու հասարակական կեանքի պատմութեան վաղեմութիւն ունի:

Քաղաքական մտքի պատմութեան ընթացքում բազմաթիւ տեսաբաններ փորձել են սահմանել հասարակական այս հզօր երեւոյթը: Ընկերվարական միտքը, յատկապէս, երբեք անտարբեր չի եղել յեղափոխականութեան գաղափարի հանդէպ: Նոյնիսկ յեղափոխական ռազմավարութիւնից պաշտօնապէս վաղուց հրաժար-

ած մի շարք սոցիալիստական կուսակցությունների ղեկավարներն ու տեսաբանները ակնածանքով են մտնում այդ գաղափարին: Օրինակ. «Մենք, ասում է Բրիտանիայի նախկին վարչապետ և լեյբորիստական կուսակցության ղեկավար Հարոլդ Վիլսոնը՝ լեյբորիստների համաժողովում, 1963 թ.,- վերասահմանում եւ վերահաստատում ենք մեր սոցիալիզմը յեղափոխության գիտական տերմիններով»: Կամ՝ օրինակ. «Յեղափոխությունը նախ եւ առաջ խզում է տիրող հասարակարգից,- ասում է Ֆրանսիայի նախկին նախագահ և սոցիալիստական կուսակցության ղեկավար Ֆրանսուա Միտերանը 1971 թ.,- ով չի ընդունում այսպիսի խզումը գործող համակարգից, կապիտալիստական հասարակարգից, նա չի կարող սոցիալիստական կուսակցության անդամ լինել»:

Պատմական փորձը ցոյց է տալիս, որ սոցիալական յեղափոխություններ չեն կարող տեղի ունենալ հետեւեալ երկու ծայրայեղ իրավիճակներում.

ա. երբ երկիրը սոցիալապէս յետամնաց է, եւ այնտեղ չկան տնտեսական եւ քաղաքական զարգացումներ,

բ. երբ երկիրը սոցիալապէս զարգացած է, եւ այնտեղ կան տնտեսական եւ քաղաքական համաչափ զարգացումներ:

Ընդհանրապէս սոցիալական յեղափոխություններ տեղի են ունենում այն երկրներում, ուր առաջանում են մեծ



Հարոլդ Վիլսոն

անհամաչափություններ տնտեսական եւ քաղաքական զարգացումների միջեւ. երբ սոցիալ-տնտեսական կեանքի որոշակի զարգացում է գոյանում, մինչդեռ քաղաքական կեանքը դոփում է տեղում: Չարգացումների նշումը անհամաչափությունը, միով բանի, ստեղծում է ապակայունություն, ինչի դեպքում էլ մեծանում է յեղափոխության հաւանականությունը:

Սոցիալական յեղափոխությունը, ըստ իր գործառոյթային նպատակների, ոչ թէ ապակայունացնող երեւոյթ է, այլ վերը նշումը անհամաչափ զարգացումների հետեւանքով առաջացած ապակայունությունը վերացնելու եւ կայունություն առաջացնելու հասարակական գործընթաց, որով կանխում են ապակայունութեան եւ անհաւասարակշռութեան հաւանական վտանգները:

Յեղափոխություն բառի լատինական արմատում եւս նկա-

տելի է կայունութեան վերադառնալու իմաստը: Ռեւոլյուցիա հասկացութիւնը առաջին անգամ օգտագործել է աստղագէտ-ֆիզիկոս Կոպեռնիկոսը՝ տիեզերական որոշակի կետի շուրջ աստղային համակարգերի պարբերական պտոյտները սահմանելու համար: Ֆիզիկայի դիտանկիւնից, ռեւոլյուցիան կայունացման վերադառնալու իմաստ է պարունակում: Հաննա Արենտը այս առընչութեամբ ասում է, որ աստղերի յեղափոխութիւնը, մարդու ազդեցութիւնից միանգամայն անկախ լինելով, մշտնջենական երեւոյթ է եւ անբողջապէս զերծ է նորարարութեան եւ բռնութեան յատկութիւններից: Ընդհանուր գաղափարը փոխառելով աստղագիտութիւնից եւ տարածելով հասարակական երեւոյթների վրայ, Արենտը ընդգծում է, որ առաջին յեղափոխությունների ռահվիրաները, որոնք ղեկավարեցին յեղափոխությունները եւ յեղափոխականութեան գաղափարը փոխադրեցին քաղաքական ասպարէզ, ամենեւին էլ «նոր աշխարհակարգերի» կողմնակից չէին, այլ, ընդամենը, ձգտում էին վերահաստատել կարգ ու կանոնը: «Ամենաարմատական յեղափոխականը,- ասում է նա,- յեղափոխութիւնից յետոյ պահպանողական է դառնում»: Թերեւս հենց այս մեկնաբանութեամբ է առաջին անգամ գործածուել յեղափոխութիւն եզրոյթը՝ անգլիական խորհրդարանի տապալման պարագայում 1660 թ.,



Հաննա Արենյան

երբ վերականգնուեց միապետական կարգը:

Սակայն պետք է ասել, որ արդի ժամանակներում հիմնովին փոխուել է յեղափոխութեան իմաստը: Չափազանց դժուար է ներկայացնել այս փոփոխութեան ամբողջ պատմութիւնը: Այսուհանդերձ, օգտակար ենք համարում յեղափոխութիւն երեւոյթի մասին մէջբերել մի շարք տեսարանների դասական սահմանումները:

Ձեյմա Դեյվիսը գտնում է, որ սոցիալական յեղափոխութեան հաւանականութիւնը բարձրանում է ոչ թէ զարգացումների անհամաչափութեան, այլ սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը յաջորդող կարճատեւ անկման պայմաններում: Նրա հիմնաւորմամբ կենսամակարդակի երկարատեւ աճն աստիճանաբար ձեւաւորում է սոցիալ-հո-

գերանական ակնկալիքների արժեքային նոր համակարգ, որը, կենսամակարդակի ցուցանիշների փոքր-ինչ անկման կամ վայրէջքի դէպքում, հանգեցնում է յեղափոխական իրավիճակների: Այս տեսութեամբ Դեյվիսը յեղափոխութեան առաջացման հարցում, փաստօրէն, հաշուի է առնում միայն սոցիալ-տնտեսական գործօնի պատճառականութիւնը:

Մոնիստական այս մօտեցման համեմատ առաւել բազմակոմպոնենտ է Սամուէլ Հանքինգտոնի տեսութիւնը: Խորքային վերլուծութեան ենթարկելով մի քանի պատմական յեղափոխութիւններ, նա եզրակացնում է, որ եթէ տնտեսական համեմատաբար լաւ վիճակին զուգորդում է քաղաքական կեանքի սահմանափակութիւնը, կամ հակառակը՝ քաղաքական կեանքի զարգացմանն առընթեր զգալի աճ չի գրանցում տնտեսական բնագաւառում, բարձրանում է յեղափոխութեան հաւանականութիւնը: Նա յայտնում է այն միտքը, որ յեղափոխութիւնը պատճառ է դառնում ոչ միայն ուժային կենտրոնների տեղաշարժի, այլեւ տեղափոխութեան է ենթարկում հասարակական չափանիշները, ընկալումները եւ սուբյեկտիւ բազմաթիւ այլ գործօններ, որոնք նոյնպէս խախտում են անհամաչափ զարգացման պայմաններում: Սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ արժեքային զարգացումների անհամաչափութեան հիման վրայ ստեղծուած հանքինգտոնեան տեսութիւնն իր եռաչափ մոդելաւորմամբ, ընդգրկում մեթոդիկա է ընձեռում մեզ՝ բնորոշելու յեղա-



Սամուէլ Հանքինգտոն

փոխութեան բազմակոմպոնենտ պատճառականութիւնը:

Անհամաչափութեան օրէնքն ի յայտ է գալիս նաեւ Կարլ Մարքսի դասական տեսութիւնների մէջ: Ըստ նրա՝ արտադրական միջոցների եւ սոցիալական յարաբերութիւնների միջեւ գոյացած անհամաչափութիւնից է կախուած յեղափոխութեան համար անհրաժեշտ էներգիայի կուտակումը: Մարքսի այս տեսութեամբ, յեղափոխութեան գոյացման պատճառը սահմանափակում է միայն առարկայական ազդակներով, իսկ ենթակայական գործօններին տրուում է երկրորդական նշանակութիւն: Մարքսիզմի այս տրամաբանութիւնը, անխուսափելիօրէն, յանգեցնում է աշխարհայեացքային մի տեսակ ճակատագրապաշտութեան (ֆատալիզմ), որով մարդ էակը, առաւել



Հրաչ Տասնապետեան

Եւս մարդկային հասարակութիւնները, գրեթէ անկախ իրենց ցանկութիւններից, գաղափարներից եւ հոգեմտաւոր արժէքներից, պարտադրաբար, ընթանում են արտադրական միջոցների եւ սոցիալական յարաբերութիւնների գծած պատմական ուղիով եւ շարժում դէպի նախագուշակուած ապագայ: Մատերիալիստական այս ծայրայեղ մօտեցումը, սակայն, անբաւարար է բնորոշելու յատկապէս սոցիալական յեղափոխութիւն երեւոյթը:

ՀՅԴ տեսարան Հրաչ Տասնապետեանը, ելնելով համադրական (սինթետիկ) մոնիզմի սկզբունքներից, ի շարս հասարակական միւս երեւոյթների, յեղափոխութեան հարցում եւս առանձնաշատուկ նշանակութիւն է տալիս առար-

կայական եւ ենթակայական գործօնների համատեղ առկայութեան, փոխազդեցութեան եւ փոխադարձ ամբողջացման հանգամանքին: «Օրէնքը ընդհանուր է, -ասում է նա,- մէկ յեղափոխութիւնէն միւսը՝ պոռթկումին մէջ դեր ունեցող առարկայական թէ ենթակայական գործօնները կրնան միայն տարբերիլ, ըստ պատմական իրականութեան եւ շարժման նկարագրին՝ ունենալ, օրինակ, մէկ կողմէ առաւելաբար տնտեսական եւ միւս կողմէ գլխաւորաբար գաղափարաբանական բնոյթ, կամ մէկ այլ մարզին մէջ էապէս քաղաքական եւ միւսին մէջ առաւելաբար կրօնա-բարոյական կամ հոգեբանական էութիւն» (Տասնապետեան Հ., Յեղափոխութիւն, Բեյրութ, 1978, էջ 72):

Տասնապետեանը, նոյն տրամաբանութեամբ, կիրառելով պատմական իրապաշտութեան (ռէալիզմ) մեթոդաբանութիւնը՝ յեղափոխութեան եւ հասարակութեան հաւասարակշռութեան յարաբերակցութեան վերաբերեալ ուշագրաւ բնութագրութիւն է տալիս.

«Ընկերութիւն մը այնքան աւելի հաւասարակշռուած է եւ կայուն, որքան այնտեղ իրական են եւ յարգուած մարդոց եւ հաւաքականութիւններու ազատութիւններն ու հաւասարութիւնը: Այդ ընկերութիւնը իր հաւասարակշռութիւնն ու կայունութիւնը այնքան աւելի կը կորսնցնէ, որքան խախտին ազատութիւններն ու հաւասարութիւնը»: Ապա զարգացումների անհամաչափեան պատճառով առաջացած անհաւասարակշռութիւնը համարելով հասարակութեան փլուզման ներոյժ վտանգ, նա գտնում է, որ իշխող համակարգը իր իրաւապահ ուժերով կարող է «բաւական երկար ժամանակ տրուել հաւաքականութեան կայունոյցն ու պայմանները պահել անկայուն հաւասարակշռութեան վիճակին մէջ իսկ» (նըշուած աղբիւր, էջ 73):

Այսքանով եզրակացնենք, որ երբ առկայ օրէնքները պետա-իրաւական դաշտի իրենց համապատասխան մե-



խանիզմներով ի վիճակի չեն վերացնել ապակայունությունը, ապա հանրությունը, իր գաղափարական հեռանկարների հիման վրայ, մեջտեղ է բերում սեփական օրենքները՝ զարգացման անհիւր բնականոն ելկայուն հուն վերադարձնելու համար: Սոցիալական յեղափոխություն երեւոյթը սահմանում է հասարակական հենց այս անկասելի ձգտումով:

Համոզուած ենք, որ եթէ մարդկային պատմութեան մէջ առհասարակ գոյութիւն չունենար յեղափոխութիւն երեւոյթը, իր ամենալայն հասկացութեամբ, ապա մարդ էակը տակաւին կ'ապրէր քարանձաւներում:

Սոցիալական յեղափոխութիւնը, ըստ տեսութեան, էպիզոդիկ երեւոյթ է հասարակական պատմութեան մէջ եւ փորձում է ամենակարճ ժամանակամիջոցում վերականգնել կայունութիւնը: Այս առումով քաղաքական մեխանիզմներով յեղափոխութեան ձգձգումը անհիմաստ միտում է եւ, բնականաբար, անյարիր յեղափոխութեան բուն էութեանը: Տեսաբանները յեղափոխութիւնը նոյնիսկ համարում են «արագ գործողութիւն»:

Աւելի ընդլայնուած սահմանում տալու համար կարելի է ասել, որ սոցիալական յեղափոխութիւնը հաւաքական իղձերի հիման վրայ ձեւաորոնող թռիչքային շարժում է՝ մի որակից առաւել բարձր որակի անցնելու նպատակով:

Հակառակ տարած-



Չալմերզ Չոնսոն

ւած դասական կարծիքի՝ յեղափոխութիւնները միշտ չէ, որ ունենում են բռնի բնոյթ: Շատ տեսաբաններ, այդ թում նաեւ Չալմերզ Չոնսոնը, յեղափոխութիւնները, ըստ իրենց բնոյթի, դասակարգում են հետեւեալ կերպ.

- Յակորբենական կամ բռնի,
- Ֆարիանական կամ խաղաղ:

Իսկ յեղափոխութեան համար անհրաժեշտ պայմաններ են համարում.

ա. տնտեսական, քաղաքական եւ մշակութային-արժեքա-

յին զարգացումների անհամաչափութիւնը եւ յարաբերակցական անհաւասարակշռութիւնը,

բ. սոցիալական զարգացած իրավիճակում՝ սոցիալական խիստ բեւեռացումն ու դասակարգային խոր ճեղքուածութիւնը եւ դրանց առընթեր՝ ստուերային տնտեսութեան եւ արտատնտեսական ոլորտների աննախադէպ աճը,

գ. իրաւական դաշտի անշարժունակութիւնը, օրենքների փոփոխման համար նախատեսուած մեխանիզմների անօգտագործելիութիւնը եւ իրաւական իզոնոմիայի խախտ-

ման երեւոյթների բացայայտ առկայութիւնը:

Բայց յեղափոխութեան համար բաւարար են հետեւեալ պայմանները.

ա. հասարակական լայն զանգուածների մէջ ընդհանրական հաւատամքի եւ գաղափարախօսական միասնութեան առկայութիւն,

բ. քաղաքական-կազմակերպչական էլիտա եւ կազմակերպութեան ձեւեր,

գ. ղեկավարներ եւ առաջնորդ:

Սոցիալական յեղափոխութեան պարագայում մեծ նշանակութիւն ունեն արժէքային համակարգերն ու գաղափարախօսութիւնները: Փաստօրէն յեղափոխութիւնները տեղի են ունենում մէկ կողմից հասարակութեան լայն գաղափարականացման եւ միւս կողմից՝ քաղաքական տիրապետող համակարգի գաղափարախօսական սնանկութեան, անճարակութեան պայմաններում: 1930-ականներին, իտալացի սոցիալիստ Անտոնիօ Գրամշին, իր «մշակութային հեղեմնոնիայի» տեսութեամբ, յեղափոխութեան գլխաւոր պայման է համարում նոյնիսկ տիրապետող «մշակութային միջուկի» քայքայումը: Նրա համոզմամբ, «մշակութային միջուկի» քայքայումը կարող է տեղի ունենալ տարիների ընթացքում, «մոլեկուլեար» մակարդակում մարդկանց գիտակցութեան վրայ աստիճանաբար ազդելու արդիւնքում:



Անտոնիօ Գրամշի

նաբար ազդելու արդիւնքում:

Հայ քաղաքական միտքը, նոյնպէս, հեռու չէ այս «մշակութային հեղեմնոնիայի» ընդհանուր մօտեցումից: ՀՅԴ գաղափարախօս Միքայէլ Վարանդեանը խորքային վերլուծութիւնների ենթարկելով Ռուսաստանի 1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնը եւ հոկտեմբերեան յեղաշրջումը յանգում է սկզբունքային եզրակացութեան: «Ընկերային յեղափոխութիւնը, -ասում է նա,- առաջ կը գայ այն ժամանակ, երբ ընկերվարական գաղափարը ոչ միայն կը նուաճէ մեծամասնութիւն, ոչ միայն խոր արմատներ կը ձգէ տնտեսական յարաբերութիւններու մէջ, այլ եւ կը տարածէ նոյն արմատները իրաւունքի եւ կուլտուրայի աշխարհում» (Վարանդեան Մ., Համայնավարութիւն եւ համաշխարհային յեղափոխութիւն, Գահիրէ, 1926, էջ 233):

Իսկ Տիգրան Սարգսեանը իրաւացի է այնքանով, որ հաստատում եւ շեշտում է «նոր գոյաբանութիւն» հասկացութիւնը, որպէս սոցիալական յեղափոխութեան հիմնական գաղափար: Նա այդ «նոր գոյաբանութիւնը» նոյնիսկ համարում է սոցիալական յեղափոխութեան առաջին փուլ, որը, միւս փուլերի համեմատութեամբ, «առաւել քողարկուած է» («21-րդ Դար», թիւ 2 (16), 2007 թ.): «Նման գաղափար, -ասում է նա,- կարող է ծնուել մէկ մարդու գլխում կամ մարդկանց խմբում: Այդ գաղափարն անցնում է փորձաքննութեան որոշակի ճանապարհ, կուտակում են գիտելիքներ, գալիս է գաղափարի իսկութեան որոշակի գիտակցում»: Սակայն Սարգսեանը բաց է թողնում մի շատ կարեւոր հանգամանք. յեղափոխութեան կամ նոր գոյաբանութեան գաղափարախօսութիւնը անպայման նոր չէ, եւ չի արարում կամ մշակում յատուկ միայն յեղափոխութեան համար, այլ շատ յաճախ ժառանգում է հանրութեան հոգեմտաւոր արժէքներից եւ համոզմունքներից, որոնք հնարաւոր յեղափոխութիւնից շատ աւելի վաղ անցել են փորձաքննութեան հասարակական ճանապարհը:

Սոցիալական յեղափոխութիւնները, որպէս հասարակական խոշոր շարժումներ, ըստ էութեան, անձեռնարկելի եւ միաժամանակ անխուսափելի են: Դրանց գոյացումը գրեթէ կախուածութիւն չունի քաղա-



«Յեղափոխութիւնը խնձոր չէ, որ հասունանալուն պէս ընկնի: Այն պէտք է քաղել»:

Չէ Գուարա

քական ուժերի կամքից: Քաղաքական ուժերը, լաւագոյնս, կարող են հասունացնել յեղափոխական գործընթացը կամ հակադրուել դրան: Որպէս հասարակական մեծ շարժում, յեղափոխութիւն երեւոյթը առաջանում է առարկայական եւ ենթակայական գործօնների փոխազդեցութեան արդիւնքում եւ, իհարկէ, ոչ քաղաքական որոշմամբ:

Յեղափոխութեան հասունացման հարցում յեղափոխական կազմակերպութիւնների դերակատարութեան մասին պարզ, բայց խորհմաստ միտք է յայտնել Էրնեստօ Չէ Գուարան. «Յեղափոխութիւնը խնձոր չէ, որ հասունանալուն պէս ընկնի: Այն պէտք է քաղել»:

Յաճախ թում է, թէ

քաղաքական ուժերը, մանաւանդ իշխող ուժերը, վարչախմբերը, ներգործելով առարկայական եւ ենթակայական ազդակների վրայ, կարող են կանխել յեղափոխութիւնները: Սակայն եթէ նրանց մէջ գոյանում է այդպիսի կամք եւ էներգիա, դա ինքնին հենց յեղափոխութեան հետեւանքն ու թելադրանքը պէտք է համարել: Այդ էներգիան, թէեւ երեւութապէս կանխում է յեղափոխութիւնը, սակայն ակունք առնելով հենց յեղափոխութիւնից, խորքում իրականացնում է բուն յեղափոխութեան նպատակները եւ դրա հետագծային ուղղութիւնը: Այս իմաստով որոշ հետազօտողներ (օրինակ՝ Ֆելիքս Ժիլբերտը) թերաճ երկրներում տնտեսական համակարգի բարենորոգման ծրագրերի իրականացումն էլ համարում են սոցիալական յեղափոխութիւն:

Այնուամենայնիւ պէտք չէ սոցիալական յեղափոխութիւնը շփոթել դրա արտաքին դրսեւորումների հետ: Յեղափոխութիւնները կարող են դրսեւորուել ընդվզումների, ապստամբութիւնների, ցուցական գործողութիւնների, հանրաքուէների եւ մինչեւիսկ վարչակարգային խորքային զիջումների տեսքով: Այնուամենայնիւ դրանցից եւ ոչ մէկը առանձնաբար դեռ սոցիալական յեղափոխութիւն չէ:

Այս տեսանկիւնից միանգամայն անիմաստ է դառնում մարքս-լենինեան «պրոֆեսիոնալ յեղափոխականութիւն» ընկալումը, որի ընդհանուր հենքի վրայ ձեւաւորուել է այն թիր կարծիքը, համաձայն որի կարելի է զուտ պրոֆեսիոնալ գործառոյթներով յեղափոխութիւն առաջացնել կամ ձեռնարկել: Անշուշտ յեղափոխական կազմակերպութիւնները կարող են ունենալ մասնագէտ ստրատեգներ, քաղաքական մասնագէտ գործիչներ, պրոպագանդիստներ, մարտական գործի մասնագէտներ եւ այլն, սակայն սխալ է նրանց անուանել «պրոֆեսիոնալ յեղափոխականներ»:

Քանզի նրանք, իրենց մասնագիտութեամբ, կոչուած են ոչ թէ յեղափոխութիւններ առաջացնելու կամ ստեղծելու, այլ ծընուող յեղափոխութեան գաղափարներին, դեկավարման գործին եւ վերջնական նպատակներին ծառայելու: Որքան էլ զարմանալի թուայ, ինքն իրեն մարքսիստ-լենինիստ համա-



Շանտալ Մուֆֆե

րող Էրնեստո Չե Գուարան մերժում է «պրոֆեսիոնալ յեղափոխականի» լեհինեան մօտեցումը: «Ես մի հիմնարար եզրակացութեան եմ յանգել, - ասում է Չե Գուարան, Կուբայում իր բանախօսութիւններից մեկի ժամանակ, 1960 թ.,- որ պէսզի բժիշկը կամ առհասարակ մարդը յեղափոխական դառնայ, անհրաժեշտ է, որ նախ տեղի ունենայ յեղափոխութիւն»: Այս տողերով մեծանուն յեղափոխականը, ակնյայտօրէն, բացառում է յեղափոխութիւն ձեռնարկելու, արտադրելու տեսութիւնները:

Եթէ Չե Գուարան սեփական փորձի, տեղական ա-

ւանդոյթների եւ ազգային արժեքների վրայ յենուած է մերժել «պրոֆեսիոնալ յեղափոխականի» լեհինեան մօտեցումը, ապա Լենինի երբեմնի գաղափարակից եւ հոկտեմբերեան յեղաշրջման կարկառուն դէմքերից Լեւ Տրոցկու տեսաբանական դպրոցի ամենատաղանդաւոր աշակերտներից Էրնեստ Մանդելը, զարմանալիօրէն, միեւնոյն տրամաբանական մերժմանն է յանգում: «Սոցիալիստական յեղափոխութիւնը,- գրում է նա,- հնարաւոր չէ կարգադրել վերից, կամ պատուիրել որեւէ ամենագէտ առաջնորդի կամ առաջնորդների խմբի կողմից»:

Հետագօտող Ֆելիքս Ժիլբերտը նոյնպէս ժամանակավրէպ

է համարում այն մօտեցումը, թէ կարելի է կանխամտածուած եւ նախապէս ծրագրուած, հաշուարկուած քայլերով յեղափոխութիւններ առաջ բերել:

Քաղաքական կանխամտածուած փոփոխութիւնները եւս պէտք է առանձնացնել բուն յեղափոխութիւն հասկացութիւնից: Քաղաքական այդ կարգի փոփոխութիւնները, ինչպիսիք են յեղաշրջումները, զինուորական հարուածները եւ մանաւանդ վերջերս մոդայիկ դարձած «թաշեայ յեղափոխութիւնները», որոնց հիմքում ընկած չէ ճշմարիտ յեղափոխութեան էութիւնից բխած ինքնաբերական ութեան (Spontaneity) օրէնքը, պէտք է առանձնացնել սոցիալական յեղափոխութեան հասկացութիւնից: Կարծում ենք, որ նըշուած երեւոյթները, հիմնականում, այլեւայլ արտաբերումներն են «պրոֆեսիոնալ յեղափոխականութեան» տեսութեան, որոնք ներկայումս առաջ են քաշում՝ տարաբնոյթ քաղաքական նպատակներով:

1981 թ. արգենտինացի Էրնեստո Լակլաուն եւ բելգիացի Շանտալ Մուֆֆեն, տարանջատելով յեղափոխութիւն երեւոյթի մասին Լենինի եւ Մարքսի ընկալումները, ապացուցում են, որ Լենինի տեսակէտները սահմանափակուած են միայն «յեղափոխական վիճակ»-ի վերլուծութեամբ եւ, ըստ այնմ, ուղղակիօրէն չեն առընչում Մարքսի բուն ուսմունքի հետ: «Լենինեան տեսութեան բուն թեման,- բնորոշում են նրանք,-

բնականոն ընթացքի խզումն է, որն առաջատար կուսակցութեանը հնարաորութիւն է տալիս միջամտել պատմութեան հոլովոյթին»: Լենինիզմի այս տեսութիւնը նոյնիսկ համարելով «հիմնական անորոշութիւն» (Fundamental Ambiguity), Լակլաուն եւ Մուֆֆէն բացատրել են յեղափոխութեան ձեռնարկելիութեան, փորձարկելիութեան եւ քաղաքական ուժերի կամքից ու բանականութիւնից կախումը լինելու հանգամանքները (Laclau E., Mouffe Ch., Socialist Strategy: Where next?, Marxism Today, 17 jan 1981):

Նշենք նաեւ, որ «հակալենինեան մարքսիզմ»-ի մի շարք տեսաբաններ եւս, այդ թում օրինակ Ջորջ Կաֆֆեն-ձիսը, ուսումնասիրելով Վ. Լենինի «Ի՞նչ պէտք է անել» գիրքը, յեղափոխութեան լենինեան ընկալումները, դիպուկ կերպով, անուանել են «յեղափոխութիւն արտադրելու» տեսութիւն (Caffentzis G., Lenin on the Production of Revolution, Leninism, Anti-Leninist Marxism and the Question of Revolution Today, Edited by Werner Bonefeld, The University of York, UK and Sergio Tischler, Universidad Autgnoma de Puebla, Mexico, December 2002): Նման տեսութիւններն, ի սկզբանէ, մերժելի են եղել ՀՅ Դաշնակցութեան համար:

Սոցիալական յեղափոխութեան ինքնաբերականութեան եւ աննախաձեռնելիութեան բնոյթի մասին խորքային մեկնաբանութիւններ է

տալիս Միքայէլ Վարանդեանը: «Ընկերային յեղափոխութիւնը, -ասում է նա,- չի «արւում» բռնութեամբ ու դէկրետներով, բուրժուազիային թալանելով ու կոտորելով, այլ նա կ'առաջանայ ինքնաբերաբար, երբ արդէն պատրաստ կը լինին նրա անհրաժեշտ տարերքները հասարակութեան արգանդին մէջ (ընդգծումները Վարանդեանինն են,- Կ. Խ.)» (Վարանդեան Մ., Համայնավարութիւն եւ համաշխարհային յեղափոխութիւն, Գահիրէ, 1926, էջ 233):

«Պրոֆեսիոնալ յեղափոխականութիւն» հասկացութեան հիմքում ընկած է նաեւ բոլշեւիկեան այն մտայնութիւնը, ըստ որի քաղաքական եւ սոցիալական հարցերի լուծման առաջնային եւ միակ ճանապարհը յեղափոխութիւնն է: Պատմութեան մէջ այս թիր ըմբռնումը, յաճախ, յեղափոխական կազմակերպութիւններին մղել է դէպի արկածախնդրութիւն եւ հատուածապաշտութիւն: Մինչդեռ յեղափոխական պրոցեսը սկսում եւ հասունանում է այն դէպքում, երբ հարցերի լուծման համար նախատեսուած օրէնքները աստիճանաբար սկսում են չգործել եւ իրաւական փորձերը հանդիպում են կոշտ արգելքների: Այլ խօսքով, ճշմարիտ յեղափոխութիւնը ոչ թէ առաջին իսկ բաց ճանապարհն է, այլ օրէնքի բոլոր փակուղիները շրջանցող արահետը:


ՀՅԴ ծրագիրը ընդգծելով ինչպէս ազգային, այնպէս էլ սոցիալական հարթութիւններում ազատութեան ձգտումների եւ ազատագրութեան անհրաժեշտութիւնների հարցը, նշում է, որ. «Այս գուգահեռ պայքարները մղում են ժո-



Արամ Արամեան (Թաթուլ), դաշնակցական գործիչ, կախաղան բարձրացուած Կարինում, 1899 թ. օգոստոսին

ղովորդավարական միջոցներով, իսկ ժողովրդավարութեան խափանման պարագայում, նաեւ յեղափոխութեամբ» (ՀՅԴ Ծրագիր, 1998):

Սոցիալական յեղափոխութիւնները անկասելի են: Սեւամորթ յեղափոխական Պերսի Նիտոնի ասացուածքը («Կարող էք բանտարկել յեղափոխականին, բայց չէ՛ք կարող բանտել յեղափոխութիւնը»), կամ ՀՅԴ գործիչ Արամ Արամեան-Թաթուլի ճիշտ 110 տարի առաջ, 1899 թ. օգոստոսին, կախաղանից հնչեցրած կոչը («Կեցցէ յեղափոխութիւնը»),



Չորջ Կաֆֆենձիս


խորհրդանշական կերպով, հաստատում են յեղափոխութիւնների անկասելիութեան օրէնքը:

Անկասելի լինելով հանդերձ, յեղափոխութիւնները երբեմն շեղում են իրենց բուն նպատակներից: Այդ շեղումը, ընդհանրապէս, մեկնարկում է յեղափոխութեան յաղթանակից յետոյ, երբ քաղաքական իշխանութիւնը ստանձնած յեղափոխութեան ղեկավարները ենթարկում են գաղափարախօսական այլասերման: Քիչ չեն գաղափարախօսական այլասերման եւ յեղափոխութիւնների «շեղման» օրինակները: Հետեւաբար սխալ կը լինի յեղափոխութիւնները գնահատել միայն դրանց անմիջական արդիւնքներով: Գրեթէ բոլոր ճշմարիտ յեղափոխութիւնները նշանակալից են դառնում իրենց յետագայ

ազդեցութիւններով եւ երկարատեւ ձեռքբերումներով:

Սոցիալական յեղափոխութիւնների գաղափարախօսական այլասերման մասին ուշագրաւ ախտաճանաչում է տալիս արձակագիր Ռուբէն Յովսէփեանը: Նա գեղարուեստական ինքնորոյն ընկալմամբ, խօսելով վաղաժամ յեղափոխութիւնների «անհամբեր», «եսասէր» եւ «փառասէր» ղեկավարների մասին, ասում է. «Նրանց համար կարեւորը ոչ թէ դաւանած գաղափարի իրագործումն է եղել, այլ իրենց մասնակցութիւնը այդ իրագործմանը: Նրանց չի մտահոգել հասարակական բոլոր շերտերի պատրաստածութեան խնդիրը: Նրանք բարարուել են միայն իրենց շրջապատով, իւրայիններով, համակիրներով, որոնք եթէ նոյնիսկ մեծամասնութիւն են կազմել թուաքանակով, ապա ոչ երբեք՝ որակով: Եւ քանի որ յեղափոխութիւնը որակական փոփոխութիւն է ենթադրում, ապա մի՞թէ պարզ չէ, որ անորակ թուաքանակով որակ չես կարող ապահովել եւ արդիւնքում ունենալու ես ընդամենը յեղաշրջում եւ ոչ թէ յեղափոխութիւն» (Յովսէփեան Ռ., Ծիրանի ծառերի տակ, Երեւան, 2006, էջ 82-83): Այսպիսով Յովսէփեանը, տեսականօրէն, ահազանգում է ղեկավարների գաղափարախօսական այլասերման վտանգը, եւ ըստ հաւանական շեղման չափի ու ստացուած արդիւնքի՝ զանազանում յեղաշրջումը յեղափոխութիւն երեւոյթից:

Ինչպէս շատ երկրներում, այնպէս էլ Հայաստանում, լիբերալ եւ պահպանողական հոսանքները, սակայն, յաճախ թերարժե-



Ռուբէն Յովսէփեան

ւորում են յեղափոխութիւն երեւոյթը, հիմնուելով մի շարք յեղաշրջումների կամ յեղափոխութիւնների անմիջական այն հետեւանքների վրայ, որոնք ի յայտ են գալիս գաղափարախօսական այլասերման պատճառով: Այս իմաստով յարմար ենք նկատում այստեղ արծարծել ՀՀ առաջին նախագահի թիւր եւ հակասական ընկալումները յեղափոխութիւն հասկացութեան շուրջ: «Պատմութեանը գրեթէ յայտնի չէ որեւէ յեղափոխութիւն, որի արդիւնքում ժողովրդավարութիւն ծրնի: Լ. Տ. Պետրոսեանն այս «հանճարեղ» միտքը յայտնել է հանրութեանը 2009 թ. մարտի 1-ին եւ ատելացրել: Յեղափոխութեան արդիւնքում, սովորաբար, մի բռնապետութեանը փոխարինում է մի այլ բռնապետութիւն»: Նա իր այս սխալ մեկնաբանութիւնից ըն-

դամենը մի քանի ամիս անց (2009 թ. մայիսի 29-ին), քննադատելով ծայրայեղ ընդդիմութեան տեսակետները չհամակրող Եւրոխորհուրդի դիւանագետներին, ինքն իրեն միանգամայն հակասելով, հնչեցրեց արդէն տրամաբանական մի բնորոշում. «Այդպէս վարուելով,- ասում է նա,- այդ դիւանագետները մոռացութեան են տալիս իրենց իսկ պատմութիւնը՝ ժողովրդավարութեան եւ ազատութեան համար Եւրոպայում տեղի ունեցած տասնեակ յեղափոխութիւններն ու հսկայական մարդկային զոհողութիւնները»: Այս բացայայտ պարադոքսը մտածել է տալիս, որ ներկայումս հայ քաղաքական գործիչների մէջ դեռես խիստ անորոշ պատկերացումներ գոյութիւն ունեն յեղափոխութիւն երեւոյթի շուրջ: Այս առումով իրաւացի է մշակութաբան Վարդան Ջալոյեանը, ըստ որի «սոցիալական շարժումը Հայաստանում կրում է անկազմակերպ, անարխիստական բնոյթ, որը վկայում է ոչ թէ զանգուածների քաղաքական ցածր կուլտուրայի, այլ պարադոքսալ կերպով հենց էլիտայի ցածր քաղաքական մշակոյթի մասին» (Ջալոյեան Վ., Սոցիալական շարժման գործօնը նախագահական ը ն տ ր ո թ ի ն ն ե ր ու մ , <http://www.peacebuilding.am>):

Իմացական մի հետաքրքիր զուգահեռ կարելի է գծել յեղափոխութիւն եւ երկրաշարժ հասկացութիւնների միջեւ: Երկրաշարժը, երկ-

րագնդի ներքին կայունութեան տեսակետից, անհրաժեշտ, անխուսափելի եւ, ինչքան էլ տարօրինակ թուայ, առողջարար երեւոյթ է: Եթէ ինչ-որ երեւակայական հնարքներով արգելակուէին երկրաշարժերը, ապա կեղեւի տեկտոնական հարթակների տեղաշարժման հետեւանքով ստեղծւած լարումները կը փոխադրուէին գնդի կենտրոն եւ այդ դէպքում երկրագունդը միանգամից կ'ապակայունանար: Յեղափոխութեան պէս, երկրաշարժն էլ լարումների համատեղ եւ միաժամանակեայ պոռթկումն է, որով կայունանում է մարդ-մոլորակը՝ հասարակութիւնը:

Գիտնականների եւ սեյսմիկ-ճարտարագետների հիմնական գործը երկրաշարժերի կանխարգելումը չէ: Նրանք իրականում փորձում են երկրաշարժի՝ այդ անխուսափելի, անհրաժեշտ եւ առողջարար երեւոյթի հաւանական ուժգնութիւնն ու աշխարհագրական դիրքը կանխատեսել եւ համապատասխան միջոցներ ձեռք առնել դրա հետեւանքները՝ մարդկային եւ նիւթական կորուստները նուազագոյնի հասցնելու նպատակով:

Սոցիալական յեղափոխութեան մասին իմաստուն տեսակետ է յայտնում տեսաբան Վալթեր Բենիամինը, որը ֆրանկֆուրտեան դպրոցի իր կուլեգաների հետ լուրջ վերատեսութեան է ենթարկել դասական մարքսիզմի եւ մարքսիզմ-լենինիզմի հիմնարար սկզբունքները, այդ թումնաւ յեղափոխութեան տեսութիւնը: «Սոցիալական յեղափոխութիւնը պատմութեան լոկոմոտիւր




Վ. Բենիամին

չէ,- Մարքսին հակադրում է Վ. Բենիամինը,- վթարային արգելակ է, որի միջոցով հնարաւոր է դառնում ոչնչացումից փրկել պատմութեան գնացքը»:

Այսպիսով, յեղափոխական կուսակցութիւնների ճշմարիտ առաքելութիւնը յեղափոխութիւնները ղեկավարելը եւ ամենակարճ միջոցում նպատակին հասցնելն է, մարդկային եւ նիւթական նուազագոյն կորուստներով երկրի կայունութիւնը վերականգնելը:

Ժամանակակից Հայոց դատաբանությունն ու յադրանակի տեսության անհրաժեշտությունը

Միզան Խարսալեան



Մենք յաճախ հպարտութեամբ կը խօսինք տարածաշրջանէն ներս Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու գերակայութեան մասին, սակայն միաժամանակ լռութեամբ կը դիմաւորենք օտար մամուլով հնչող մեր բանակի ռազմական կարողութիւնները ժամանակաւոր երեւոյթ դասող գնահատումները: Այս իմաստով, մեզ կը հետաքրքրեն այն գնահատումները, որոնց համաձայն հայկական բանակը մարտավարական եւ գործողութեանական (operational) իմաստով բացառիկ ըլլալով հանդերձ, ռազմավարականօրէն անձեռնհաս է (incompetent):

Ի՞նչ կը նշանակէ անձեռնհասութիւն: Մեր գնահատումով հարցը կը վերաբերի յադրանակին, յադրելուն, պատերազմը շահելու



Կոլին Ս. Գրեյ

Եւ սակայն խաղաղութիւնը կորսնցնելու մեզի վերագրուող հակումներուն: Երբ փորձենք մօտէն նայիլ կատարուած հաստատումին, կը տեսնենք, որ այս խնդիրը ունի տեսական մի խոշոր բաղադրիչ, որ ազգային անվտանգութեան շրջանակներու կողմէ մեր կարծիքով առհասարակ չէ շօշափուած կամ քիչ է շօշափուած:

Արդարեւ, յաղթանակի կոնցեպտը է եւ կը շարունակէ մնալ անվտանգութեան մասնագետներու համար ամենամեծ մարտահրաւերներէն մին:

Անվտանգութեան մասնագիտական ոլորտի գործիչները կարիքը ունին հիմնական մի կառոյցի, որու շրջածիրէն ներս պիտի ստեղծել պատերազմէն յաղթական դուրս գալու, յաղթանակի շուրջ գաղափարներու մի դարբնոց: Դարերու ընթացքին հազարաւոր էջեր գրուած են թէ ինչպէս պէտք է պատերազ-

մին յաղթանակել, սակայն յաղթանակի հայկական մի տեսութիւն մշակելու ուղղութեամբ շատ քիչ փորձեր են եղած:

Միջազգային գրականութեան մէջ գոյութիւն ունեցող տեսութիւնները շատ քիչ ուշադրութիւն կը դարձնեն, թէ «**ինչ է յաղթանակը եւ ինչու կը յաղթենք**» տիպի խնդիրներուն վրայ, եւ յաճախ ճիգերը կը կեդրոնացնեն «**ինչպէս յաղթելու**» աւելի բարդ խնդրին վրայ: Տեսաբանները ընդհանրապէս միայն անցողակի կարծարծեն շահելու, յաղթելու հարցը: Այստեղ անշուշտ կը բացառենք Կլաուսվիցը (Clausewitz),- թէւ անոր միտքերը յաղթանակի մասին նոյնպէս ամբողջական չեն:

Այս յօդուածի նպատակը պատերազմի մասին առկայ տեսութիւններու քննարկումը եւ թերութիւններու կամ սխալներու մատնանշումը չէ. պարզապէս մի փորձ է **յաղթանակ**-ին կապուած որոշ մտածումներ քննարկման թե-

մա դարձնելու: Միաժամանակ այս յօդուածը միտում չունի նոր տեսութիւն յղանալու, այլ կը փորձէ քննարկումները դիտարկել մեր իրականութեան պրիզմայով:

Ի՞նչ է ՅԱՂԹԱՆԱԿԸ

Նախ նայինք մի քանի նորագոյն հեղինակներու աշխատութեանց: Կոլին Ս. Գրեյ (Colin S. Gray) ունի **վճռորոշ յաղթանակի** կարելիութեան գաղափարը եւ այս մասին իր մենագրութեան մէջ կարծարձէ յաղթելու մէկ կոնցեպտ, ուր առանցքային է վճռորոշութիւնը (decisiveness):

2007ին Ուիլիամ Մարթելը (William Martel) յաղթանակի տեսութեան թեմայով հրապարակեց մի աշխատութիւն: Ի՞նչ է յաղթանակը Մարթելի համար: Պատերազմում յաղթանակը տարրական մակարդակով պարզապէս գնահատական մըն է. ո՛չ փաստ-իրականութիւն է եւ ոչ ալ հանգամանք-պայման: Այլ միայն գնահատում, արժեւորում:

Յաղթանակը կարող է լինել մի հոգու տեսակետ, կամ տեսակետներու ամալգամ: Յաղթանակը կարող է կապ ունենալ առարկայական տուեալներու հետ, ինչպիսին են՝ մարդկային կորուստներ, տարածքներու կորուստներ կամ ազատագրումներ, եւ կամ կարող է առհասարակ կապ չունենալ այսպիսի չափորոշիչների (criteria) հետ: Պատերազմը շահելու համար այս չափանիշերը անկասկած կարելոր են.- յատկապէս կարելոր է անոնց ազդեցութիւնը ընկալումի վրայ: Սակայն կենսական նշանակութիւն ունի կացութեան ընկալումը, եւ ոչ թէ փաստ-հանգամանքը:

Տարբեր ղեկավարներ, նայած թէ ինչպիսին է նրանց ընկալումը, կրնան իրաւացիորէն իրարմէ տարբերիլ իրենց գնահատումներուն, արժեւորումներուն մէջ:

Գնահատումի ասպեկտը բազմապատկօրէն կը բարդացնէ յաղթելու հարցը: Որովհետեւ այն իր հետ կը բերէ անհակակշռելի հետեւեալ փոփոխականները.

ա. որո՞ւ գնահատումը առաջնային է եւ գերադաս,

բ. ի՞նչ աստիճանի առաջնային է այն,

գ. այդ գնահատումները ի՞նչ չափորոշիչների վրայ հիմնուած են, եւ այլն:

Այս հարցադրումներէն կառաջանան հիմնական մի քանի խնդիրներ:

Առաջին. հակամարտող երկու կողմերու միջեւ ուղղակի ներգործումի հետեւանք արդիւնքները ոչ միայն կապակցուած են, այլ նաեւ իրարմէ կախեալ: Սա յատկապէս ճիշդ է, երբ երկու կառոյցներու միջեւ կայ մրցակցութիւն: Բայց որովհետեւ յաղթանակը հիմնականօրէն գնահատում մըն է եւ ոչ թէ փաստացի եզրակացութիւն՝ իւրաքանչիւր կողմ անկախ է պատերազմի արդիւնքներու գնահատման մէջ, եւ հետեւաբար կառաջանան մէկէ աւելի գնահատումներ, իրարամերժ գնահատումներ, որոնք իրարմէ կը տարբերին՝ նայած թէ ովքեր են պատերազմի մասնակիցները: Այլ խօսքով՝ այն հանգամանքը, որ մի կողմը մեծ մասշտաբով յաղթեց, մեքենաբար չի նշանակեր թէ հակառակորդը կրեց մեծ չափի պարտութիւն: Հնարաւոր է նոյնիսկ, որ հակառակորդը ընդհանրապէս ոչ մի կորուստ-պարտութիւն կրէ:

Երկրորդ. պատերազմում յաղթական դուրս գալը, ի տարբերութիւն ճակատամարտը կամ արշաւը նուաճելէ, զուտ քաղաքական հանգամանք մըն է: Եթէ պատերազմը քաղաքական ակտ համարենք, ապա յաղթանակը եւս բարձրագոյն մակարդակների վրայ պէտք է սահմանուի քաղաքական տերմիններով:

Ուրեմն՝ այս մտածողութենէն մեկնած, կարելի է ընել այն հետեւութիւնը, թէ առանց քաղաքական նպաստաւոր ելքերու ապահովման, ապարդիւն է միայն գործողութիւններու

կամ տակտիկական ճակատի վրայ յաղթանակ տանիլը:

Միաժամանակ, **յաղթանակի էութիւնը** հասկանալու համար, բաւարար չէ սահմանափակուիլ ռազմավարական յաղթանակի քաղաքական հանգամանք ըլլալու իմացութեամբ:

Երրորդ. քանի որ յաղթանակը ընկալում կամ գնահատում մըն է, այն մեծապէս կախեալ է հեռանկարէն:

Ռազմական համատեքստի մէջ, սա կը նշանակէ յատուկ զգայնութեան առարկայութիւն պատերազմի որակի եւ մակարդակի գծով: Օրինակ՝ կարելի է տակտիկային ջախջախիչ մի յաղթանակ ապահովել, որ սակայն իր հետ չի բերեր գործողութեանական (operational) կամ ռազմավարական արդիւնքներ: Ուրեմն՝ արդեօ՞ք սա յաղթանակ է: Անկասկած յաղթանակ է՝ ռազմական հրամանատարի տեսանկիւնէն, սակայն ռազմավարական կամ գործողութեանական (operational) հրամանատարների տեսանկիւնէն պատկերը կրնայ բոլորովին տարբեր ըլլալ: Յարաբերակցութեան ճիշդ այս իւրայատկութիւնն է որ Ծոցի առաջին պատերազմի ընթացքին Իրաքի նախագահ Սադդամ Հիւսէյն օգտագործեց եւ ինքզինք յայտարարեց յաղթական: Ան կրեց տակտիկական եւ գործողութեանական (operational) մեծ կորուստներ, այսուհանդերձ վարչակարգը գոյատեւեց, - այս պարագային վարչակարգի գոյատեւումը ռազմավարական նպատակ էր: Սադդամ Հիւսէյնի տեսանկիւնէն պատերազմը ռազմավարական յաղթանակ էր:

Տեսանկիւնային յատկութիւնը կը թոյլատրէ պատերազմի յաղթանակը քննել երեք կտրուածքներով՝ մարտավարական, գործողութեանական (operational) եւ ռազմավարական: Որովհետեւ մարտավարական յաղթանակը գրեթէ բացառապէս եւ ուղղակի ռազմական գործողութիւն է, այն կարելի է հասկնալ

եւ ընդհանրապէս գնահատել՝ օգտագործելով տրամաբանական եւ չափելի (հաշուելի) չափորոշիչներ՝ հողային տարածքներու կորուստ կամ ձեռքբերում, գերիներ, զոհեր: Այս բոլորը ունին կշիռ եւ կարող են արտադրել յաղթանակի կամ պարտութեան տրամաբանական եւ մեծամասնութեան կողմէ ընդունելի արժեւորումներ: Գործողութեանական (operational) յաղթանակը նոյնպէս թափանցիկ է գէթ իր ձեւին մէջ. արշաւ մը յաջողած կամ ձախողած կը բնութագրուի՝ հիմնուած լաւ ըմբռնելի եւ չափելի կրիտերիաներու վրայ:

Ռազմավարական յաղթանակը, սակայն, աւելի բարդ խնդիր է:

Ո՞ր կտրուածքը էական նշանակութիւն ունի: Հեշտ է փորձութեան մատուցիլ եւ ըսել որ երեք կտրուածքներ համահաւասար կարելորութիւն կը ներկայացնեն: Սակայն կը կարծենք, որ սա սխալ է: Ի վերջոյ՝ ամենէն կարելորը ռազմավարական ելքն է:


Tactical and operational յաջողութիւններ կարող են բեմահարթակ ծառայել ռազմավարական յաղթանակին, բայց առանձնաբար առած բաւարար չեն յաղթանակ ապահովելու համար:

Կուլին Գրեյ ու Ուիլիամ Մարթել կը գրեն յաղթանակի սանդղակի մասին, ուր յաղթանակն ու պարտութիւնը բեւեռային երկու հակառակներ են: Հազարաւոր կէտեր կան սանդղակի երկայնքին, որոնք կը սահմանաճշդեն յաջողութեան/յաղթանակի այլազան աստիճանները: Յաղթանակը կրնայ եւ վճռական ըլլալ, եւ կամ չըլլալ՝ նայած թէ ինչպէս կը կարգավորուին քաղաքական խնդիրները: Եւ այս երկու հնարաւորութիւններու միջեւ կան միջանկեալ անթիւ հնարաւորութիւններ:

Սակայն Գրեյ կօգտագործէ իրագործումի (achievement) եւ վճռորոշութեան երկու տարբեր սանդղակներ եւս: Թէեւ վճռորոշութիւնը կարելի է համարել յաղթանակի սահ-

մանման մի մասնիկը, այսուհանդերձ երկու սանդղակներու գաղափարը օգտաշատ մէկ կոնցեպտ է, մանաւանդ որ հիմնական ներգործութիւնը տեղի կունենայ սանդղակի երկայնքին տարբեր կէտերու միջեւ գտնուող տարածութեան մէջ: Այնպէս որ կռուի դաշտի վրայ յաղթանակը կարող է ռազմական կամ քաղաքական վճռորոշ ազդեցութիւն չունենալ արշաւին կամ ճակատամարտին վրայ: Ինչպէս կարելի է յաղթել տարբեր աստիճաններով, այնպէս էլ կարելի է ձախողիլ-պարտութիւն կրել տարբեր աստիճաններով: Հետեւաբար, իրագործումի սանդղակը ունի նաեւ բացասական բաղադրիչներ (տե՛ս Նկ. 1):

Գրեյի մոդելը հնարաւորութիւն կուտայ զանազանելու կարելոր երանգաւորումներ, որոնք պայմանական են պատերազմի մէջ յաջողութեան հասնելու համար: Ի՞նչ պէտք է հետեւցնել այս երանգաւորումներէն: Նախ որոշ հաստատումներ. **յաղթանակը** իր բնոյթով ամբողջական է եւ հաւանաբար վերջնական: Այլ խօսքով՝ յաղթանակը կը լուծէ պատերազմի շարժառիթ դարձած քաղաքական բոլոր խնդիրները: Միւս կողմէ՝ հնարաւոր է պատերազմում յաջողիլ, սակայն չիրագործել պատերազմի սկզբում հետապնդուած բոլոր նպատակները եւ կամ լուծել քաղաքական առկայ բոլոր խնդիրները:




Յաջողութեան տեսական սանդղակը կը շարժի ձախէն աջ, պարտութենէն կորուստ, - չշահիլ - գերոյական հանգոյց - չկորսնցնել - շահիլ եւ մինչեւ յաղթանակ երկարող կէտերէն: Սակայն կայ մի նրբութիւն. իւրաքանչիւր երկու կէտի միջեւ կան երանգաւորումներ եւ ենթա-աստիճաններ (Նկար 1): Յաղթանակը ամբողջական իրագործում է, իսկ պարտութիւնը՝ աղէտալի, մինչդեռ սանդղակի միւս հնարաւորութիւնները իրենց մէջ կը պարունակեն եւ որոշակի շահ, եւ որոշակի կորուստ:

Այս համատեքստում ի՞նչ կուտայ Արցախեան պատերազմի գնահատումը. անհրաժեշտ է քննել՝ արդեօք լուծե՞լ ենք քաղաքական խնդիրները: Խաղաղութիւնը, զինադադարը ամբողջակա՞ն, թե՞ մասնակի յաղթանակ են:

Այստեղ կուգեմ ուշադրութիւն հրաւիրել այն բանի վրայ, որ Գրեյի այս մոդելը կը տարբերէ **շահելը** եւ **յաղթելը**, ինչպէս նաեւ **կորուստը** եւ **պարտութիւնը**: Յաճախ այս բառերը կօգտագործենք որպէս հոմանիշներ, սակայն

Շահիլ կենթադրէ յաջողութեան հասնիլ կռուի դաշտին վրայ եւ ապահովել որոշ քաղաքական նպատակներ, բայց ոչ անպայման հասնիլ **քաղաքական ամբողջական յաջողութեան՝ յաղթանակի**:

Սանդղակի կորուստի կողմը **պարտութիւնը** եւս բացարձակ կոնցեպտ է, ինչ որ կը նշանակէ եւ կռուի դաշտի վրայ ձախողութիւն, եւ քաղաքական նպատակներու անիրագործելիութիւն, միաժամանակ առկայ խնդիրներու



կարգաւորման ձախողութիւն եւ նոյնիսկ խնդիրներու սրում:

Հետեւաբար, կան յաջողութեան երկու բաղադրեալներ, որոնք հոս կը ներկայացուին որպէս իրագործումի եւ վճռորոշութեան սանդղակներ:


Այս երկու բաղադրեալները ունին կապակցութիւն, սակայն նաեւ իրարմէ անկախ փոփոխականներ են.

Վճռորոշութիւնը նաեւ կը ցոլացնէ հնարաւոր ելքերու մի ամբողջ շարք:

Վճռորոշութեան սանդղակը (Նկ. 2) ցոյց կուտայ հնարաւոր ելքեր, որոնք իրարմէ շատ կը տարբերին. սկսած քաղաքական խնդիրներու լուծումէն, անցնելով տարբեր, մասնակի լուծումներով, անարդիւնաւէտ (կամ status quo), մինչեւ քաղաքական իրավիճակի հնարաւոր վատացում եւ կամ սաստիկ վատթարացում:

Եթէ վճռորոշութիւնը գործիք է, որ կը գնահատէ պատերազմի հետեւանքները քաղաքական խնդիրներու վրայ, ապա Իրագործութեան սանդղակը կը ծառայէ գնահատելու՝ թէ ինչքա՞ն արդիւնաւէտ կը կիրառենք մեր ռազմավարութիւնը: Այսինքն՝ որքան մեծ են ռազմաճակատի վրայ մեր յաջողութիւնները, նոյնքան ուժեղ է այդ յաջողութիւններու ուղղակի ազդեցութիւնը քաղաքականութեան վրայ:

Իրագործութիւնը (Նկ. 3) նոյնպէս ունի երանգաւորումներ՝ սկսած ոչ մի իրագործումէն մինչեւ ամբողջական յաջողութիւն.



Սկար 3. Իրագործութեան սանդղակ

Իրագործութեան սանդղակն ամենէն յաճախ օգտագործուող սանդղակն է, որ երբեմն կը շփոթուի յաջողութեան սանդղակին հետ:

Երկու սանդղակները ունին մօտիկ յարաբերակցութիւն, մանաւանդ որ գործողութեանական (operational), տակտիկական եւ ռազմավարական մակարդակներու վրայ իրագործումի սանդղակը իր մէջ կընդգրկէ քաղաքական եւ ռազմական խնդիրներ:

Շահելու բնորոշումներ

Շահիլ պարզապէս կը նշանակէ իրականացնել հնարաւոր ելքերու մի այնպիսի տարբերակ, ինչը մեզի համար կամ լաւագոյնն է եւ կամ նախընտրելին: Յաղթանակը



ընդհանրական բառ է, որ կօգտագործուի նկարագրելու համար պատերազմի մեջ յաջողութեան կոնցեպտը:

Այս բնորոշումը անշուշտ ունի իր առաւելութիւնները, սակայն կուտայ շահելու միայն մասնակի պատկերը: Ցանկալի էլք ձեռք բերելը հակամարտութեան մը լուծման թերեւս ամենէն տարրական մեթոդն է, տեսականօրէն մարդը կը պայքարի իրեն համար ցանկալի էլք ապահովելու համար եւ կամ գէթ հասնելու մի լուծումի, որ նախընտրելի է, քան պատերազմի շարունակման տարբերակը: Բայց սա համազօր չէ յաղթանակի: Կարելի է, օրինակի համար, հետապնդել քաղաքական կամ ռազմական մի դրութիւն, որ ամբողջական յաղթանակ չէ, սակայն նպաստաւոր է, պարտութեան փոխարէն գերադասելի է: Աւելի լաւ է պատերազմը աւարտել հաւասար արդիւնքով՝ խաղը ոչ-ոքի:

Պարզ է, որ կռիւները չեն դադարելու այնքան ժամանակ, քանի դեռ կռուող կողմերը խաղաղութիւնը չեն տեսներ իբրեւ աւելի յուսալի, ցանկալի, քան հակամարտութեան շարունակումը: Կարելի՞ է Արցախեան պատերազմի 1994 թ. զինադադարը քննել այս ակնո-

ցով: Ինչո՞ւ որոշեցինք պատերազմը չշարունակել: Արդեօ՞ք զինադադարի կնքումը յաղթանակ էր նաեւ ադրբեջանցիների համար: Կլաուսվիցեան տերմինով, այն պահուն, երբ ճակատամարտող մի կողմի համար պահանջուող ճիգը կը գերազանցէ քաղաքական հնարաւոր դիւիդենտներու ձեռքբերումը եւ անոնց արժէքը, ապա նոյն այդ պահուն պէտք է դադարեցնել պատերազմը: Հայկական կողմը հասել էր այն կէտին, ուր պատերազմի շարունակումը կը պահանջէր գերազանց ուժերու լարում, որու դիմաց մենք պիտի ստանայինք նուազ արժէքի դիւիդենտներ: Այլ խօսքով, ցանկալի էր խաղաղութիւնը՝ հակառակ անոր, որ մենք տակաւին չէինք քաղել մեր յաղթանակի քաղաքական պտուղները: Արցախի ազատ ինքնորոշման իրաւունքի ուղղութեամբ տասնամեակներէ ի վեր ընթացող բանակցութիւնները կը վկայեն այն մասին, որ հայութիւնը չյաջողեցաւ իր ռազմական յաղթանակը վերածել քաղաքական յաղթանակի: Նպատակ չունիմ նսեմացնելու մեր ազգային ամենամեծ իրագործումը, սակայն պարտաւոր ենք վերլուծել եւ հասկնալ, թէ ինչո՞ւ զինուորական մեր յաղթանակը պատերազմի աւարտին անմիջապէս չվերածուեցաւ քաղաքական անժխտելի հանգամանքի:

Երբեմն ցանկալի եւ մանաւանդ **ընդունելի** էլքի ապահովումը կրնայ վերածուիլ հակամարտութիւնն աւարտելու նախապայմանի: Բայց ճակատներուն վրայ մարտը դադարեցնել անհրաժեշտաբար չի նշանակեր յաղթանակի ձեռքբերում:

Իրականութիւնը այլ է. **յաղթանակ** ու **հակամարտութեան աւարտ** երկու տարբեր ու յաճախ երկու իրարամերժ կոնցեպտներ են: Երբեմն կարելի է եւ նոյնիսկ ցանկալի է հակամարտութիւն մը աւարտել առանց վճռորոշ յաղթական կողմեր ունենալու: Եւ

հակառակը, կարելի է հակամարտութիւնը երկարաձգել-շարունակել յաղթելու յոյսով եւ կամ գէթ կորուստ չկրելու նպատակով:

Կենթադրուէ իրագործել խաղաղութեան մի ինչ որ իրավիճակ, սակայն այդ խաղաղութիւնը ինքնին հաւասար չէ յաղթանակի: Արցախի տարածքին եւ սահմաններու երկայնքին տիրող անդորրութիւնը անաւարտ պատերազմ է:

ՀՀ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանի խօսքերով. «Քանի դեռ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը չի ստացել իրաւաբանական կարգավիճակ եւ ճանաչուած չէ, պատերազմն էլ աւարտուած չէ» (10.03.2009):

Այստեղ կարելոր է հասկանալ շահելու եւ յաղթելու միջեւ նրբութիւնները. շահելու պարագային տարբերութիւն չկայ, թէ ինչ է նպատակը, դրական է կամ ժխտական, այսինքն՝ անկարելոր է, թէ ինչ ես փորձում իրագործել, հաստատել մի որոշակի հանգամանք եւ կամ կանխել ինչ որ հանգամանքի առաջացում: Երկու պարագաներուն ալ շահեկան դուրս կուգանք: Նոյնը նաեւ սահմանափակ կամ անբողջական նպատակներու իրագործման պարագային: Իսկապէս նշանակութիւն չունի, եթէ նպատակը ուղղակի կապուած է քո գոյատեւման հետ, ազգի գոյատեւման հետ, եւ կամ կը վերաբերի մի երկրորդական մանրամասնի, օրինակի համար հակառակորդին ազդարարելու նպատակին:

Անբողջական պատերազմները կամ որոշակի մտադրութիւն հետապնդող պատերազմները, ինչպիսին է, օրինակ, տարածքի ձեռքբերումը, կարելի է դատել նմանապէս որոշակի չափանիշներու հիման վրայ: Տարածքի ձեռքբերումներ իրագործուեցա՞ն կամ տարածքներու կորուստի առաջքը առնուեցա՞ն, պատերազմի վերջում ո՞ր կողմը մնաց աննկուն:

Յաղթանակի ապահովման բացարձակ չափանիշներ չկան: Կրնա՞յ ըլլալ, որ պատերազմէն միաժամանակ յաղթական դուրս գան հակամարտող **երկու** կողմերը: Եթէ պատասխանը այո է, ապա ուրեմն ինչո՞ւ պատերազմիլ: Կուզենք հաւատալ, որ խելօք մարդիկ կրնան բաւարարող լուծումներ գտնել առանց պատերազմի երթալու: Սակայն պատմութիւնը կը վկայէ այլ բան. այդպիսի դէպքեր չկան:

Պատերազմը դիմամիկ գործընթաց է: Այդ գործընթացքին քաղաքական նպատակները փոքր-ինչ կրնան փոխուիլ: Ուրեմն գալիք խաղաղութիւնը, որու հիման վրայ պիտի կատարուի յաղթանակի կամ պարտութեան արժեւորումը, կրնայ, նոյնիսկ, առընչութիւն չունենալ սկզբնական քաղաքական նպատակներու հետ:

Նկատի առնելով Առաջին աշխարհամարտին տոն տուող պատճառները եւ հետապնդուած նպատակները մի կողմից եւ պատերազմի աւարտին ձեռք բերուած խաղաղութիւնն ու քաղաքական իրագործումները միւս կողմից, պիտի տեսնենք, որ անոնք իրարու հետ գրեթէ կապ չունէին: Բուռն դիմադրութեան հանդիպելու պարագային քաղաքական գործիչները կրնան վերատեսութեան ենթարկել քաղաքական սկզբնական նպատակները:

Միտքս այն է, որ կարելի չէ ի սկզբանէ որոշել յետպատերազմեան քաղաքական հնարաւոր հանգուցալուծումները: Միւս կողմէ, եթէ ենթադրեալ պարտուող կողմի քաղաքական նպատակները շատ սահմանափակ են, օրինակի համար երբ մի կողմը կը բաւարարուի կամքի կամ ուժի ցուցադրութեամբ, ազդարարութեամբ, սպառնալիք, պատգամ փոխանցելով, ապա պարտուող կողմը կրնայ իրաւացիօրէն յայտարարել, որ իր նպատակները իրագործուած են եւ հետեւաբար նաեւ ինքն է յաղթական:

Օրինակի համար, 1973ի արաբ-իսրայէլեան պատերազմի աւարտին, եգիպտացիները



րը արդեն կտրած էին Սուեզի ջրանցքը, անոնց ուժերը տակաւին կը մնային արեւելեան կողմը, եւ դիմակայած իսրայելեան ուժերի յառաջխաղացքը: Քաղաքական իմաստով, անոնք կրնային արհամարհել այն հանգամանքը, որ իսրայելեան ուժերը անցեր էին հակա-յարձակողական արշաւի, չեզոքացուցած էին եգիպտական երկու յարձակողական բանակներէն մին, եւ հետեւաբար հնարաւորութիւնը ունէին եգիպտական բանակը կատարելապէս քայքայելու: Եգիպտացիները ռազմական դժուար կացութեան էին մատնուած, սակայն նախագահ Անուար Սադատ յաջողեցաւ բանակցիլ եւ ընդունիլ Քեմպ Դէյվիդի (Camp David) խաղաղութեան պայմանագիրը, որովհետեւ ան կարողութիւն ունէր յայտարարելու (գէթ ներքին

սպառունի համար), որ Եգիպտոսը պատերազմէն դուրս եկաւ յաղթական:

Ուրեմն, պատերազմող կողմերէն մէկը կրնայ մեծ յաղթանակ ապահովել, առանց որ միւս կողմը մեծ կամ աննշան կորուստ կրէ:

Նոյնպէս հնարաւոր է, որ կողմերէն ոչ մէկը յաղթական դուրս գայ: Լիդդել Չարտ կը գրէ, որ երբ հակառակորդ երկու կողմերը կը ճանաչեն մէկը միւսի լիարժէք ուժը, ապա ձեռք բերուած խաղաղութիւնը աւելի նախընտրելի է, քան երկու կողմերու մաշումի արդիւնքում ծնածը: Եւ նման համաձայնութիւնը յաճախ կայուն եւ տեւական խաղաղութեան հիմք հանդիսացած է:

(Շարունակութիւնը յաջորդիւ)

Droschak

ORGANE

de la Fédération

Révol. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOUR

„Droschal“

GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳԵՂՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

Թիւրքիա: Արտագաղթը

Լուրերը հետզհետեւ կը խսանան և կը գուժեն մեծ աղէտը - աւելի մեծ, քան 95-ի ջարդերը, աւելի ահաւոր, քան Ադանայի սարսափները - ընդհանուր արագաղթի սղանիչ սրամադրութիւնը: Եւ քանի մը գաւառներէն խմբերով չուելը ալիքաձև սարածուելով դէմի հայաբնակ վայրերու ամէն մէկ խուլ անկիւն՝ սարսափի դռներ կը բանայ ամենուրեք: Ծայր յուսահատութիւնը զալիք օրերու նկատմամբ իբր մղձաւանջ կը ծանրանայ ամենի կրծքին:

Ընդհանուր ճիչի մը մէջ, գաղթի արձագանքը կը թռչի Եւրոպա, Եգիպտոս, Ամերիկա, մինչեւ Արժանթինի հասարակադէտութիւնը, ուր զարնուելով այս նիւթական դարու չոր-եսական արտին, կընկնի դէմի ետ, դէմի գուլունի աշխարհը, որ յետոյ նորէն ուժեղ բռնկուծով մը մռնչէ ամբողջ աշխարհին - դէմի դուրս, դէմի ամէն տեղ, երբեք հայրենիք:

Ժողովրդական հոգեբանութեան այս ցաւազար դրութիւնը հասկանալի է: Ամբոխային մտածմունքն է այդ: Բայց երբ մայրաքաղաքը նսած ժողովրդական սրամադրութիւնը ղեկավարողները, մամուլի ներկայացուցիչներն են այդ քիւրիմացութեան մէջ ընկնողները, երբ անոնք մէկ յօդուածով գաղթը կը դարսաւեն և միտով կը փառաբանեն, այդ աւելի քան յուսահատական է: Եւ ցաւալի է,

որ յեղափոխական օրգանը ստիղծուած է ոչ միայն ժողովրդական հոգեբանութեան սխալ մտնանները հրադարակ հանել, այլ և այն մամուլի, որ ժողովրդի մտաւոր մակարդակէն բարձր չի խոյանար և յաճախ անոր սխալները կը կրկնէ: Եւ ո՞վ կարող է ըսել, թէ թերթի մը փառաբան մէկ տողը գաղթի նկատմամբ ժողովրդական յուսահատութիւնն ու գաղթի սրամադրութիւնը իր գրգռումին չի հասցներ: Ժողովրդական ամէն մէկ սխալ փայլ ունի իր բացատրութիւնը, բայց մամուլի սխալը աններելի է:

Գուցէ ոմանք ուզեն այդ վարմունքը արդարացնել, բացատրելով թէ գաղթի ջատագովը՝ մամուլի մէջ՝ սղանալիք մըն է կառավարութեան, զայն զգասացնելու, սթափեցնելու, իր երկիրը շինարար ժողովրդէ մը թափուր դարձնելու հեռանկարը անոր ցուցադրելով, բայց այդ մտածմունքն իսկ շատ է թեթև:

Ըսել մամուլի մէջ, թէ հրադարակագրի ձայնը անզօր է կատեցնել մի հոսանք, որ հետևանք է կեանքի վաթար տայմաններու, անստոյգ աղաքայի, թէ կանչն ու յորդորը դասարկ ձայներ են այնտեղ, ուր ժողովրդական սրամադրութիւնը կը թելադրէ հակառակը, կը նշանակէ, չըմբռնել հրադարակախօսութեան այն մեծ դերը, որ ան կը խաղայ այսօր ամբողջ փառաքաղաքի աշխարհին մէջ, կը նշանակէ ուրանալ անոր կեփոքը և նշանակութիւնը: «Մամուլը 6-րդ դարէն իսկ իսպառնակ է» խօսքը դասարկ ֆրազ չէ գեղեցկախօսութեան համար արտայայտուած:

Պոյսոյ հայ մամուլն էր, որ այնչափ աղմուկ բարձրացուց Ադանա հրահարակուող «Իթիսալ» թերթի և անոր խմբագիր Ֆիքրիի դէմ, լաւ ըմբռնելով թէ որչափ ազդեցիկ դեր կը խաղայ մամուլը ժողովրդի հոգեբանութեան վրայ,

զայն դէմի ոճիւր առաջնորդելու սև գործին մէջ:

Այս օրինակները բաւական են մի տողէ մտածել սալու մի քարք հայ հրադարակագիրներուն՝ գրելէ առաջ ճանչնալ գրչի ուժը և ըստ այնմ արձարծել մի գերագոյն կարևոր խնդիր, ինչդիսին է արագաղթը: Խօսել արագաղթի մասին այնպէս, ինչպէս երբեմն կարձանագրեն հասարակական դանդախութեան, ժամանակաւոր սարագնացութեան մասին, դրուագել Ամերիկա դանդախած հայ երիտասարդներուն կորովն ու ջանքը՝ իրենց ամբողջը հայրաքաղաքէլէ զատ, հեռաւոր հայրենիքի մէջ իրենց ծնողներուն նիւթական նոյաւս հասցնելն ու ասկէ եզրակացութիւն թէ ընդհանուր արագաղթն ևս մի առանձին կորուստ չէ հայութեան համար, սա արդէն ողջամտութեան բացատրումն է:

Հրադարակագիրներէն ոմանց այսօրուայ վայնասունն ու արագաղթը ներող յօդուածները մեզ ենթադրել կուտան, որ եթէ 95-ին նոյնչափ ազատ մամուլ ըլլար Թիւրքիոյ մէջ, ինչպէս վերջերս էր, ինքնաբերաբար գաղթել չուզող հայ ժողովուրդը մեր հրադարակագիրները իրենց ձախաւեր դրոյազանդով մինչև այժմ խաղաղ գաղթեցուցած դիտի ըլլային - իրենց երևակայութեան մէջ - այնչափ մեծ դիտի ըլլար արագաղթի կոչը անոնց կողմէն:

Հայ ժողովուրդը անյիշատակ ժամանակներէն շատ սուղ գնով ու յիշատակներով է կապուած իր հողի հետ, շատ աւելի վայրենի ցեղեր է անցուցեր իր կեանքի կամուրջով և ամէն անգամ իր յամառ դիմացկունութեամբ նորէն ուժ է առեր ուրիշ աղէտ մը դիմագրաւելու աստիճան:

Ան շատ է կոփուր, կարծուածէն շատ աւելի, անոր հոգին շատ է մարգուրտ երևակայածէն ալ աւելի՝ զգալու և համոզուելու համար թէ ինքը դեռ ամբողջ է և աւելի երկար ու աւելի բեղմնաւոր կեանք, քան ոճիւրը, որի մէկ սխալ ժեսը այսօր կը սարսափեցնէ հայ «հրադարակագիրը»:

Պետք է փրկել հայերին
Երևան, 2009 թ., 80 էջ

ԺԱՆ ԺՈՐԵՍ

ՊԵՏՔ Է ՓՐԿԵԼ
ՀԱՅԵՐԻՆ

Ժան ժորես

*«Ես դաստաս եմ իմ խոսքերը հեռ առնել,
եթե Ֆրանսիան իր այս չորս
սարվա դասնությունը ջնջի»:*

Ժան ժորեսի այս խոսքերով ավարտվեց Ֆրանսիայի պառլամենտում 1896 թվականի նոյեմբերի 3-ին տեղի ունեցած թունդ վիճաբանությունը: Իսկ վեճը ծագել էր այն բանից հետո, երբ ժամանակի հայտնի քաղաքագետը, առաջին անգամ Ֆրանսիայի խորհրդարանում, ելույթ ունեցավ և պաշտպանեց Թուրքիայի տիրապետության տակ հայտնված հայության իրավունքները՝ համիդյան կոտորածների համար մեղքի բաժին հանելով Ֆրանսիային և Ռուսաստանին, որոնց այն օրերի համատեղ ապաշնորհ քաղաքականությունը հանգեցրեց հայկական կոտորածների, իսկ այդ երկրներին վերածեց հանցավոր դիտորդների: Ժան ժորեսին բազմիցս փորձեցին լռեցնել: Հայտարարեցին, թե նա, խոսելով բեմից, իր ելույթով վնաս է հասցնում սեփական երկրին, խորհրդարանի նախագահը նույնիսկ պահանջեց հետ առնել խոսքերը: Բայց ժորեսն անդրդվելի էր: Հաջորդ՝ 1897 թվականին, փետրվարի 22-ին և մարտի 15-ին, ժան ժորեսը ևս երկու անգամ ելույթ ունեցավ նույն թեմայով՝ եվրոպական ողջ առաջադեմ երկրներին կապելով անարգանքի սյունին այն բանի համար, որ չեն փորձել անգամ վերջ դնել ոչ միայն թուրքական պետության, այլև նրա կողմից քաջալերվող քրդական ավազակախմբերի դեմ մի-

այնակ մնացած և ստիպված ինքնապաշտպանության դիմած հայության տառապանքներին:

Մեր ընթերցողների ուշադրությանը ներկայացվող գրքում, առաջին անգամ հայերեն թարգմանությամբ, լույս են տեսել Ֆրանսիայի արժանավոր զավակ ժան ժորեսի խորհրդարանական երեք հայտնի հայանպաստ ելույթները, որոնք, ականատեսների կարծիքով, գերազանցել են Ցիցերոնի, հին ու նոր աշխարհի բոլոր հռետորների ելույթները: Դրանք, ավելի քան մեկ դար անց, դեռևս պահպանում են իրենց այժմեականությունը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման անխուսափելիության գիտակցությունը մարդկությանը փոխանցելու առումով:


Հատկանշական է նաև, որ իր նշանավոր ելույթներից կարճ ժամանակ անց ժան ժորեսը աշխատակցել է Քրիստափոր Միքայելյանի՝ 1900 թվականին Փարիզում հիմնադրած «Pro Armenia» երկշաբաթաթերթին, եղել նրա խմբագրակազմի անդամներից մեկը:

«Թարգմանչի նախաբանը» բաժնում Գրիգոր Զանիկյանը ընդգծում է, որ ժորեսի ելույթները մեկ անգամ ևս փաստում են, որ հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության ժամանակագրությունը իրականում պետք է սկզբնավորվի 1895 թվականից, և դժվար է ասել, թե իրականում ինչպիսի չափերի կհասներ համիդյան զոհերի թիվը, եթե չկազմակերպվեին Վանի, Սասունի, Զեյթունի հայտնի ինքնապաշտպանական կռիվներն ու չհնչեր հայ ժողովրդի ձգտումների լավագույն թարգման ժորեսի և մյուս մարդասերների բողոքը:

Գրքում ժորեսի ելույթները մեկնաբանել, արժևորել և դրանց արդիականությունը իմաստավորել է միջազգայնագետ Անդրանիկ Պետրոսյանը, ով նաև ղեկավարում է Կանադայում գործող «Նախիջևան» գիտակրթական կենտրոնի կողմից ձեռնարկված «Ազգային և միջազգային խնդիրներ» մատենաշարի աշխատանքները:

«Պետք է փրկել հայերին» գրքի մի կարևոր մասն են կազմում նաև ժան ժորեսի կյանքի համառոտ ժամանակագրությունն ու մի շարք վավերագրերը:

Էդիկ Անդրեասյան



Էմիլ Գազազ

Ծնվել է 1953-ին, Գյումրիում, 1965-1968 թթ. սովորել է Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցում, Երևան, Հայաստան: 1968-1972 թթ.՝

Փանոս Թերլեմեզյանի անվան արվեստի ուսումնարանում:

1972-1979 թթ. ուսանել է Երևանի գեղարվեստի ակադեմիայում:


1968 թ. ի վեր մասնակցել է հանրադատական և միջազգային մի ԵարՖ ցուցահանդեսների և արձեմադրների:

Էմիլ Գազազի աշխատանքները դասվում են Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանում (Երևան) և Ճարտարապետության և ֆադաբաշինության թանգարանում (Գյումրի), Երևանի «Արամե» դասկերասահում, ԱՄՆ-ի և Եվրոպական մի ԵարՖ երկրների մասնավոր հավաքածուներում:

Էմիլ Գազազը 2004 թ. և 2007 թ. Ֆլորենցիայի Բիենալեում արժանացել է «Մեդիչի» գլխավոր մրցանակին ֆանդակագործության ոլորտում:







ԴՐՕՇԱԿ

